ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԵՐ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՑԱՆՑԱԿԵՆՏՐՈՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գագիկ Տեր-Հարությունյան

Հայության տարբեր հատվածների միջեւ հարաբերությունները քննարկելիս, սովորաբար, հնչեցվում են իրարամերժ մոտեցումներ: Հայաստանը ներկայացնող քաղաքական գործիչները եւ փորձագետները, որպես կանոն, պնդում են, որ այդ հարաբերությունները պետք է լինեն «Հայաստանակենտրոն», իսկ Հայությունը պետք է համախմբվի Հայրենիքում: Այլ երկրներում բնակվող մեր հայրենակիցներն արտահայտվում են ավելի զուսպ. նշում են Սփյուռքի առանձնահատկությունները եւ ակնարկում Հայաստանի ներկա, ոչ այնքան բարվոք իրավիճակի մասին:

Կողմնորոշումների նման տարբերությունը առավելապես պայմանավորված է Հայության տարբեր հատվածների ներկայացուցիչների հոգեկերտվածքային առանձնահատկություններով, քան իրատեսական, փորձագիտական մոտեցումներով: Նկատենք, որ ընդհանրապես Հայության քաղաքական կազմակերպման վերաբերյալ համալիր ռազմավարական եւ հայեցակարգային մոտեցումները դեռեւս բացակայում են: Խնդրին սակավ են անդրադառնում նաեւ մասնավոր հետազոտություններում: Սակայն վերջերս քաղաքական եւ վերլուծաբանական հանրությունում որոշակի տարածում են գտնում գաղափարներն այն մասին, որ *տեղեկատվական-ցանցակենտրոն (ՏՑ) համակարգը* Հայության քաղաքական կազմակերպման համար ամենաարդյունավետն է, եւ նման տեսակետի հետ դժվար է չհամաձայնել:

Հիշենք, որ ներկայումս կատարյալ համարվող ՏՑ համակարգում կազմակերպման ենթակա միավորները, լինելով սփռված, ունեն միասնական ղեկավարություն եւ նպատակներ, գտնվում են միասնական տեղեկատվական դաշտում՝ ցանցում ու, միեւնույն ժամանակ, տիրապետում են ինքնուրույն գործելու բարձր կարողությունների: Ինչպես տեսնում ենք, ՏՑ համակարգի կիրառումը ենթադրում է որոշակի գաղափարախոսական (նպատակների համատեքստում), կազմակերպական եւ տեղեկատվական նախապայմաններ: Միեւնույն ժամանակ, ՏՑ համակարգի առավելություններից է ճկունությունը. այն կարող է ընդունել տարբեր մոդիֆիկացիաներ՝ կախված Հայության տարբեր հատվածներում տիրող իրավիճակից եւ տվյալ ժամանակահատվածի համար ընտրված նպատակներից:

Հարցերի վերոնշյալ համախումբը խիստ ծավալուն է, եւ դրա իրատեսական քննարկումը պահանջում է սպառիչ տեղեկատվություն Հայության տարբեր հատվածների վերաբերյալ: Նկատենք նաեւ, որ ՏՑ համակարգում իրենց տեղն ունեն ոչ միայն Հայության ավանդական կառույցները, այլեւ հայկական կամ հայերի մասնակցությամբ գործող տարաբնույթ, այդ թվում՝ անդրազգային կազմակերպությունները եւ հաստատությունները, որոնց դերակատարումն օրեցօր աճում է: Հաշվի առնելով նշված իրողությունները՝ փորձենք քննարկել Հայության ՏՑ համակարգի մի քանի հնարավոր տարբերակներ, որոնք կապված են Հայաստանին առնչվող որոշ հավանական սցենարների հետ: Ի թիվս բազմաթիվ տեսական տարբերակների, մասնավորապես, դիտարկենք հետեւյալ՝ երկու ծայրահեղ եւ մեկ միջանկյալ սցենարները:

«Վիրտուալ Հայաստան». Այս ծայրահեղ բնույթի սցենարի էությունը հետեւյալն է. որոշակի ռազմաքաղաքական զարգացումների արդյունքում ներկայիս Հայաստանը (ՀՀ եւ ԼՂՀ) հայաթափվում եւ վերածվում է վերացական, վիրտուալ գաղափար-հասկացության (մոտավորապես այն կարգի, ինչպիսին է Հայության համար ներկայիս Արեւմտյան Հայաստանը): Դա հնարավոր է, մասնավորապես, հետեւյալ զարգացումների պարագայում.

1. Միջուկային-էկոլոգիական աղետ. Իրան–ԱՄՆ/Իսրայել հակամարտությունը հանգեցնում է տարածաշրջանային միջուկային պատերազմի, որի հետեւանքով Իրանի հարեւան Հայաստանը ենթարկվում է էկոլոգիական աղետի: Միջուկային պատերազմների հետեւանքների գիտական կանխատեսումները մոտ 60-ամյա պատմություն ունեն, սակայն ներկայացնենք դրանցից ամենավերջինը: Համաձայն Կոլորադոյի համալսարանի կատարած հետազոտության, լոկալ հակամարտությունում 50 ատոմային ռումբ (որոնց հզորությունը չի գերազանցում Հիրոսիմայի վրա նետվածին) օգտագործելու դեպքում, մասնավորապես, կգոյանա օզոնային խոռոչ, որի հետեւանքով կզոհվի 50 մլն մարդ, այսինքն՝ մոտ այնքան, որքան 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Նման աղետի դեպքում՝ ներկայիս Հայաստանի տարածքում բնակվելը, թերեւս, դառնում է անհնար:

2. Ռազմական-քաղաքական աղետ. Որոշակի աշխարհաքաղաքական ցնցումների եւ ռազմաքաղաքական զարգացումների արդյունքում ՀՀ-ն եւ ԼՂՀ-ն ենթարկվում են Թուրքիայի եւ Ադրբեջանի լայնածավալ ինտերվենցիային ու երկարաժամկետ օկուպացիային:

Հետեւանքները. Սցենարներից որեւէ մեկի իրագործման արդյունքում դադարում են գոյություն ունենալ հայկական զույգ պետությունները, իսկ Հայաստանի ներկայիս տարածքը հայաթափվում է: Նման պարագայում, թերեւս, տեղի կունենա Հայության վերատեղաբաշխում այլ երկրներում, իսկ Հայաստանն ինչ-որ ժամանակահատվածում կվերածվի *երեւակայական Հայրենիքի:*

Նկատենք, որ ներկայացված, գուցեեւ անհավանական թվացող, սակայն տեսականորեն հնարավոր սցենարները Հայաստանի անվտանգության դեմ ուղղված հիմնական սպառնալիքներից ընդամենը մի քանիսն են: Նման զարգացման պարագայում Հայության գոյատեւման եւ կազմակերպման խնդիրները հնարավոր է իրագործել բացառապես ՏՑ համակարգի ձեւավորման միջոցով: Ստեղծված պայմաններում համակարգի կենսունակությունը գործնականում կարող է երաշխավորված լինել, թերեւս, այն դեպքում, երբ զուգահեռ գործեն մի քանի տեղեկատվական կառավարման կենտրոններ, որոնցից որեւէ մեկը չունի գերակայող կարգավիճակ: Այդ կենտրոնները պետք է ղեկավարվեն Հայության անվտանգության հայեցակարգը ներկայացնող միասնական գաղափարախոսական հիմնադրույթներով եւ գործեն փոխօգնությամբ՝ ապահովելով դրական հետադարձ (միմյանց ուժեղացնող) կապը համակարգի տարրերի միջեւ: Նման փոխհամագործակցություն եւ փոխազդեցություն ապահովող համակարգերն ընդունված է անվանել *ոչ գծային:*

«Հզոր Հայաստան». Այս մյուս ծայրահեղ սցենարը ենթադրում է հետեւյալ զարգացումները. աշխարհաքաղաքական ցնցումների եւ զարգացումների հետեւանքով Հայաստանը վերականգնում է իր բնատարածքային ամբողջականությունը, իսկ Հայությունը կենտրոնանում է այդ նոր ու հզոր պետությունում: Դա հնարավոր է, մասնավորապես, հետեւյալ իրադրությունում.

1. Թուրքիան ներգրավվում է լայնածավալ պատերազմի մեջ իր հարեւաններից մեկի կամ մի քանիսի հետ միաժամանակ (օրինակ՝ Իրաքի, Հայաստանի եւ Հունաստանի):

2. Թուրքիայի համար պատերազմի անհաջող ընթացքը հանգեցնում է միջէթնիկական կռիվների սաստկացման. քրդերի կողմից արդեն իսկ վարվող պայքարին միանում են նաեւ այլ ազգային փոքրամասնություններ՝ հայերը, հույները եւ այլք, այսինքն՝ այսպես կոչված «ինքնության ճգնաժամը» տեղափոխվում է գործնական ռազմական-քաղաքական հարթություն:

3. Վերոնշյալ գործընթացները սրում են հարաբերությունները ներթուրքական տարբեր քաղաքական կողմնորոշումներ ունեցող խմբավորումների միջեւ եւ, ի վերջո, բերում քաղաքացիական բախումների: Պետության եւ հանրության ճգնաժամն ընդունում է քաոսային եւ անվերահսկելի բնույթ:

4. Հայաստանը եւ Հայությունը (գուցեեւ այլ շահագրգիռ տերությունները) օգտվում են Թուրքիայում ստեղծված իրադրությունից, նպաստում այդ երկրի մասնատմանը եւ կարողանում զգալի չափով վերականգնել Հայաստանի բնատարածքային ամբողջականությունը: Որպես հաջորդ քայլ՝ իրականացվում է Հայության կենտրոնացումը ազատագրված Հայրենիքի մի մասում. այդպիսով ձեւավորվում է Հայկական հզոր պետություն:

Սակայն անգամ *Հզոր Հայաստանը,* որտեղ կարող է բնակվել Հայության գերակշռող մասը, պետք է ձգտի զարգացած երկրներում ունենալ սակավաթիվ, բայց կարող համայնքներ: Այսինքն, նույնիսկ եթե Հայաստանը վերածվում է Հայության գերակայող կենտրոնի, միեւնույն է, պետք է ձգտել պահպանել սփռված Հայության ավանդական դարձած ռեսուրսները՝ դրանց հաղորդելով յուրահատուկ դեսպանությունների կարգավիճակ: Այս տարբերակում պետք է ձեւավորել Հայության կազմակերպման Հայաստանակենտրոն դասական ՏՑ համակարգ, երբ կառավարումը գլխավորապես իրագործվում է մեկ կենտրոնից:

«Զարգացած Հայաստան». Այս սցենարը ենթադրվում է հետեւյալ իրողությունների պարագայում.

1. Հայաստանը Հայության, պետական ռեսուրսների եւ դաշնակիցգործընկեր երկրների աջակցությամբ ձեռք է բերել ռազմական անվտանգության երաշխիքներ, հնարավորինս ինտեգրվել է համաշխարհային կառույցներին, սկսել է ազատագրված տարածքների վերաբնակեցման գործընթացը:

2. Զարգացած Հայաստանը դառնում է խիստ գրավիչ Հայության համար, Հայաստան–Հայություն հարաբերություններն ընդունում են համակարգված բնույթ, սկսում է ձեւավորվել Հայության միասնական տեղեկատվական դաշտը:

Այս զարգացումներն ամենահիրատեսականն են ու, թերեւս, պարտադրված, քանի որ ոչ զարգացած Հայաստանի պարագայում Հայության կազմակերպման ՏՑ համակարգի ձեւավորումը կապված է անհամեմատ մեծ բարդությունների հետ:

Կասկած չի հարուցում, որ *Զարգացած Հայաստանը,* տիրապետելով ազգային ռեսուրսների մի գերակշռող մասին, կներկայացնի Հայության ամենակազմակերպված հատվածը: Արդյունքում՝ նման պետությունը ՏՑ համակարգում ձեռք կբերի կարեւորագույն դերակատարում: Միեւնույն ժամանակ, ազգային տեխնոլոգիական եւ նյութական ռեսուրսների մի զգալի մասը գտնվում է այլ քաղաքակրթական գոտիներում ու երկրներում բնակվող Հայության, ինչպես նաեւ այլ կազմակերպական ձեւաչափերում գործող հայերի ձեռքում. այսինքն՝ Հայության այդ հատվածները նույնպես կարող են առաջատար դեր կատարել Հայության ՏՑ համակարգում:

Այսպիսով, *Զարգացած Հայաստանի* առկայության դեպքում, տեղեկատվական-ցանցային կազմակերպման տեսանկյունից, Հայությունը հայտնվում է նախորդ երկու սցենարների համեմատ միջանկյալ վիճակում: Նման միջանկյալ համակարգն իր մեջ պետք է համատեղի ե՛ւ ոչ գծային (սփռված), ե՛ւ դասական (Հայաստանակենտրոն) հայեցակարգերը:

ՆԵՐՔԻՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՒՅԹԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՃՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ռուբեն Մելքոնյան

Թուրքիայի իսլամացված հայության մեջ, էթնիկ ինքնագիտակցության մակարդակով, հստակ առանձնանում է ծպտյալ հայերի խումբը, որն ի տարբերություն իսլամացված հայերի այլ խմբերի՝ ձգտում է պահել նաեւ ազգային նկարագիրը: Այս խումբն է, որ գաղտնի շարունակում է պահպանել եւ կիրառել ազգային, կրոնական սովորույթների շատ տարրեր: Ավելորդ չէ նշել, որ տարբեր տարիներին արձանագրված կրոնադարձության (քրիստոնեություն վերընդունելու) դեպքերը առավելապես արձանագրվել են հենց այս խմբին պատկանողների շրջանում: Ուշագրավ է եւ, միեւնույն ժամանակ, շատ կարեւոր, որ այս խմբի հայերի ընտանեկան կենցաղում եւս պահպանվել են էթնիկ ինքնագիտակցության հետաքրքիր դրսեւորումներ, որոնցից կուզենայինք առանձնացնել ներքին ամուսնությունների սովորույթը:

Ծպտյալ հայերն արտաքուստ մուսուլման ներկայանալով՝ ոչ միայն գաղտնի շարունակում են ազգային-կրոնական որոշ սովորույթներ, այլեւ ձգտում են ամուսնանալ իրենց նման ծպտյալ հայերի հետ: Ընդ որում՝ ներքին ամուսնությունների ժամանակ երկրորդ պլան են մղվում տարիքային, դասակարգային, սոցիալական եւ այլ խոչընդոտներ, բացի այդ, դրանք հիմնականում նպաստում են ծպտյալ հայերի կյանքի ներփակ բնույթի շարունակմանը: Ներքին ամուսնությունների ինստիտուտը ենթադրում է նաեւ ծպտյալ հայերի շրջանում որոշակի ցանցի առկայություն, որը թույլ է տալիս նրանց, թեկուզ հեռակա, ճանաչել միմյանց: Երբեմն այս վարկածի օգտին է խոսում նաեւ ներքին ամուսնությունների աշխարհագրությունը, երբ բավական հեռու գյուղերի բնակիչներ ամուսնանում են իրար հետ: Որոշակի փաստեր կան, որոնք թույլ են տալիս եզրակացնել, որ հատկապես ինքնաբացահայտված եւ կրոնադարձված ծպտյալ հայերի շրջանում արձանագրվում են նաեւ բացահայտ հայերի հետ ամուսնություններ: Նման օրինակներից է ադրյամանցի Սադրք Բաքըրջըօղլուն, որն ապրելով Ստամբուլում՝ պաշտոնապես կրոնադարձվել է, ընդունելով իր պապերի կրոնը՝ քրիստոնեությունը, եւ ամուսնացել հայաստանցի մի աղջկա հետ, իսկ որդուն ուղարկել հայկական դպրոց:

Ծպտյալ հայերի մեջ տարածված ներքին ամուսնությունների սովորույթի եւ փոխադարձ ճանաչման հնարավոր ցանցի գոյության որոշ փաստերի ենք հանդիպում նաեւ հայկական թեմատիկայով գրված ժամանակակից թուրքական գրականության մեջ: Օրինակ, գերմանաբնակ թուրք գրող Քեմալ Յալչընի «Քեզնով է ուրախանում սիրտս» փաստա-գեղարվեստական գրքում քյահթացի ծպտյալ հայի զավակ, Գերմանիայում բնակվող Հաջը Իբրահիմը, խոսելով ներքին ամուսնությունների մասին, ասում է. «Մեզ մոտ ամուսնությունը միշտ «մերոնց» (ծպտյալ հայերի) միջեւ է լինում: Դուրս ոչ աղջիկ ենք տալիս, ոչ էլ դրսից աղջիկ ենք առնում, որովհետեւ դրսից եկած հարսը կարող է «մերոնց» գաղտնիքներն իմանալ»: Իսկ երբ նրանց դրացի քուրդը խնդրել է Հաջը Իբրահիմի քրոջ ձեռքը, նրա հայրը մերժել է, սակայն վախենալով, որ կարող են աղջկան փախցնել, ամուսնացրել է «մերոնցից» ճաղատ, տգեղ, աղքատ եւ որբ մի հովվի հետ: Քեմալ Յալչընի նույն գրքում ծպտյալ հայուհի Սուլթան Բաքըրջըգիլը պատմում է, որ իր պապը չորս տղաներին էլ ամուսնացրել է ծպտյալ հայերի հետ, իսկ 12-ամյա աղջկան, վախենալով, որ քրդերը կփախցնեն, ամուսնացրել է 30-ամյա ծպտյալ հայի հետ, դրանով իսկ, ըստ իրեն, փրկել աղջկան:

Այս եւ նմանատիպ այլ օրինակներ հաստատում են վերոնշյալ այն պնդումը, որ ծպտյալ հայերի ներքին ամուսնությունների ժամանակ տարիքային, դասակարգային, սոցիալական եւ այլ խոչընդոտներն անտեսվում կամ երկրորդական են համարվում:

Պատահական չէ, որ ծպտյալ հայերի շրջանում տարածված ներքին ամուսնությունների սովորույթը գրավել է նաեւ թուրք գիտնականների հետաքրքրությունը: Նրանք այդ հարցն ուսումնասիրել են՝ ունենալով բազմաթիվ հնարավորություններ եւ փաստեր: Մանրակրկիտ հետազոտելով կրոնադարձված հայերի տոհմածառերը՝ նրանք ի հայտ են բերում փաստեր, որոնք ապացուցում են, որ շատ հաճախ եւ, իհարկե, ոչ պատահաբար ամուսնություններ են տեղի ունենում ծպտյալ հայերի սերունդների միջեւ: Ծպտյալ հայերի ներքին ամուսնությունների մասին թուրքական աղբյուրներում հանդիպած օրինակներից մեջբերենք մի քանիսը.

1. Ծպտյալ հայ Չեթին Բոզքայան (ծնվ. 1923թ.), որը 1990թ. 67 տարեկանում կրոնադարձվել է՝ ընդունելով քրիստոնեություն, ամուսնացած է հայուհի Շաքե Բոզքայայի հետ: Ներկայացված է նաեւ նրանց տոհմածառը, որտեղից պարզվում է, որ նրանց ծնողները ծագումով հայեր են: Ավելին, նրանց որդին՝ Գյուլա Արփադ Բոզքայան եւս 1990թ. 29 տարեկանում վերընդունում է քրիստոնեություն: Հետաքրքիր է, որ Գյուլա Արփադ Բոզքայան ամուսնանում է 1967թ. ծնված Նարգիզ Բոզքայայի

հետ, որի ծնողները նույնպես ծագումով հայեր են: Նարգիզ Բոզքայան եւս 1996թ. վերընդունում է քրիստոնեություն:

2. Ահմեթ Քարաքուշի, որի ծնողները հայեր են եղել, կինը՝ Տիգրանուհին եւ որդին՝ Պերճը, 1986թ. դատարանի որոշմամբ վերադառնում են քրիստոնեության: 1989թ. կրոնադարձվում է նաեւ Ահմեթ եւ Տիգրանուհի Քարաքուշների աղջիկը՝ Ֆաթման, իսկ նրանց մյուս չորս երեխաները մնում են մուսուլման: Սակայն այդ մուսուլման մնացած երեխաներից մեկը՝ Զեմիլեն, ամուսնանում է 1959թ. ծնված Աթափ Քաբեի հետ, որի ծնողները սասունցի հայեր են՝ Սահակն ու Մարիամը: Հետաքրքիրն այն է, որ այս զույգն իրենց տասներեք երեխաներին գրանցում է որպես քրիստոնյաներ:

3. 1966թ. քրիստոնեություն ընդունած եւ 1967-ին հայ քրիստոնյա Անդրանիկ Չաքըջըի հետ ամուսնացած Ֆիդան Դեմիրի ծնողները նույնպես ունեն հայկական ծագում, ավելին՝ աղբյուրում ներկայացված են նաեւ նրա հորական տատի ու պապի անունները՝ Մանուկ եւ Մարիամ: 1996թ. Ֆիդան Դեմիրն անվանափոխվում է՝ ընդունելով Սեդա անունը, իսկ երեխաներին՝ Թալինին եւ Արային, գրանցում որպես քրիստոնյաներ: Թուրքական աղբյուրները նշում են, որ Ֆիդան Դեմիրի քույրերը՝ Էմինեն եւ Այշեն, համապատասխանաբար 1962 եւ 1990թթ. ընդունում են քրիստոնեություն:

4. Ծպտյալ հայի որդի Դավիթ Թաշդեմիրը 1955թ. հրաժարվելով իսլամից՝ ընդունել է քրիստոնեություն: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, Դավթի ծնողները Մուսթաֆան եւ Ֆադիմն են, սակայն հոր ծնողների անուններն են Արթին (Հարություն) եւ Սրբուկ, իսկ մոր ծնողների՝ Առաքել եւ Մարիամ: Դավիթ Թաշդեմիրն ամուսնացել է հայ քրիստոնյա Սաթենիկ Թաշդեմիրի հետ, իսկ Դավթի երկու եղբայրները՝ ծպտյալ հայեր Հայրիյեի (որի ծնողներն են Հովսեփը եւ Լուսինեն) եւ Հաթիջեի (որի ծնողները Կիրակոսը եւ Աննան են): Դավթի երրորդ եղբայրն ամուսնացել է հայ քրիստոնյա Սրբուկի հետ: Դավիթ Թաշդեմիրի զարմիկներից Գուլյա Թաշդեմիրը 1992-ին, 66 տարեկանում, Սարգիս Թաշդեմիրը 1982-ին, 48 տարեկանում, Էլմաս Թաշդեմիրը 1977-ին, 33 տարեկանում, վերադարձել են իրենց նախնիների կրոնին եւ ընդունել քրիստոնեություն: Դավիթ Թաշդեմիրի մյուս եղբայրները, զարմիկները դեռեւս շարունակում են գրանցված մնալ որպես մուսուլման:

5. Թունջելիի (Դերսիմ) Այդընլը գյուղի բնակիչ, ծպտյալ հայ (շրջապատում որպես ալեւի ներկայացող), 1944թ. ծնված Ազիզ Չելիքը 1972թ. փոխում է իր կրոնը՝ ընդունելով քրիստոնեություն, միաժամանակ վերցնում է նաեւ Սարգիս անունը: Սարգիս Չելիքը ամուսնանում է 1949թ.

Արաբկիրում ծնված հայ քրիստոնյա Բյուլբյուլ Յըլընջըօղլուի հետ: Նրանց երկու տղաներն էլ՝ 1972թ. ծնված Սեւան Չելիքը եւ 1977թ. ծնված Սավաշ Չելիքը, քրիստոնյաներ են:

6. Կրկին Թունջելիի Այդընլըք գյուղի բնակիչ, շրջապատում որպես ալեւի հայտնի, 1938թ. ծնված Յըլդըզ Զանիքի նախնիները նույնպես հայեր են, իսկ նա 2004թ. հունվարի 15-ին վերընդունել է քրիստոնեություն: Նրա որդին՝ 1962թ. Ստամբուլում ծնված Մահմութը, 1992-ին ընդունում է քրիստոնեություն: 1980-ին այդ նույն քայլին է դիմում նաեւ Յըլդըզի քույրը՝ Փերիհանը, անվանափոխվելով Փիրուզ:

Ծպտյալ հայերի ներքին ամուսնությունների մասին տվյալների ենք հանդիպում նաեւ Արեւմտյան Հայաստան այցելած տարբեր մարդկանց մոտ: Հայ ճարտարապետության պատմության մասնագետ Սամվել Կարապետյանը, անդրադառնալով այս խնդրին, նշում է. «Արեւմտյան Հայաստանում մահմեդական հայերը, եթե իրենք գտնում են, որ հայ են, միշտ խնդիրներ ունեն տեղի քրդերի հետ, նույնիսկ արյունահեղության մակարդակի. քրդերը նեղվում են, որ մահմեդական հայերն իրենց աղջիկ չեն տալիս, աղջիկ վերցնում են, բայց չեն տալիս»:

Մենք նույնպես Արեւմտյան Հայաստանում մեր հանդիպած ծպտյալ հայերի հետ զրույցներում լսել ենք ներքին ամուսնությունների մասին, սակայն այդ սկզբունքը քրդական միջավայրում ոչ միշտ է հնարավոր պահպանել: Այն վայրերում, որտեղ քրդերի եւ ծպտյալ հայերի հարաբերությունները լարված են, դա ավելի հեշտ է, իսկ որտեղ նրանք ունեն նորմալ հարաբերություններ, ոչ միշտ են կարողանում խուսափել խառնամուսնություններից, սակայն այստեղ նույնպես նկատելի է, որ առավելապես փորձում են աղջիկ վերցնել, բայց չտալ:

Ավելորդ չէ նշել, որ ներքին ամուսնությունների սովորույթը ծպտյալ հայերը փորձում են պահպանել նաեւ Եվրոպայում, ուր արտագաղթել են նրանց բազմաթիվ ընտանիքներ: Օրինակ, հայտնի Վարթո ցեղի անդամները, ապրելով Բելգիայում, շարունակում են ներքին ամուսնությունները, սակայն եթե նախկինում ամուսնանում էին միայն ցեղակիցների հետ, ապա այժմ՝ ընդհանրապես հայերի:

Այսպիսով, կարելի է ասել, որ ներքին ամուսնությունների սովորույթը հանդիսանում է Թուրքիայի ծպտյալ հայերի ազգային ինքնագիտակցության եւս մեկ ապացույց: Սա, միեւնույն ժամանակ, կարեւոր տարբերակիչ հատկանիշ է, որով ծպտյալ հայերը տարբերվում են իսլամացված հայերի այլ խմբերից:

ՎՐԱՍՏԱՆ. *ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՍՊԱՍԵԼԻՍ*

Սարգիս Հարությունյան

Չնայած վերջին շաբաթներին Վրաստանին առնչվող զարգացումների առանցքային հարցը դարձել է աբխազական ուղղությամբ պատերազմի վերսկսման հավանականությունը, սակայն զարգացումների հիմնական աղբյուրը պետք է փնտրել այլ տեղ:

Միացյալ Նահանգների հետ հարաբերություններում վրացական արտաքին քաղաքականությունը մուտք է գործել մի փուլ, որն առնչվում է ողջ Հարավային Կովկասին եւ այստեղ առկա միջազգային ու տարածաշրջանային բոլոր ուժի կենտրոններին: Այստեղ գործընթացն այլեւս զարգանում է գերազանցապես ամերիկա-ռուսական հարաբերությունների տրամաբանության շրջանակներում, եւ տպավորություն է առաջանում, թե Թբիլիսին կորցրել է անգամ վետոյի իրավունքը: Գոնե այս պահին ավելի հիմնավորված է թվում այն մոտեցումը, թե նշված փուլից Վրաստանն ամեն դեպքում դուրս կգա կորուստներով կամ նվազագույնը՝ ցնցումներով:

Այլ կերպ ասած՝ ներկայում Վրաստանի շուրջ ընթացող զարգացումները ենթադրում են ԽՍՀՄ փլուզումից հետո ձեւավորված ու մինչ օրս գործող անվտանգության հարավկովկասյան կառույցի փոփոխություն: Հյուսիսատլանտյան դաշինքի բուխարեստյան գագաթաժողովի (ապրիլի 2-4, 2008թ.) որոշումը՝ համաձայնվել ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցությանը[1], անշուշտ, հարցի համար ունի սկզբունքային նշանակություն: Բայց մեր տարածաշրջանի պարագայում այն կարող է նշանակել ցնցումներով լի նոր փուլի մեկնարկ, որովհետեւ զարմանալի կլինի, եթե հզորացող Ռուսաստանն անտարբեր մնա իր համար կենսական համարվող տարածաշրջանում նման փոփոխությանը՝ ի վնաս իր շահերի:

Հայաստանի համար կարեւորն այն է, որ առաջիկա ամիսներին կամ գուցե տարիներին ցանկացած լուրջ տեղաշարժ վրացական ուղղությամբ ի վիճակի է արմատապես ներազդել մեր երկրի անվտանգության ապահովման վրա: Այսինքն՝ ստեղծվել է մի իրավիճակ, երբ զարգացումները Վրաստանի շուրջ իրենց նշանակությամբ մեզ համար դառնում են խիստ էական:

* * *

Թիվ մեկ հարցը, որի պատասխանը կօգնի ճիշտ բնութագրել ձեւավորվող իրավիճակը, այն է, թե ինչ տարբերություն կա 2004թ. աջարական եւ ներկայում ծավալվող աբխազական ճգնաժամերի միջեւ:

Բավականին հիմնավորված է այն մոտեցումը, որ Ասլան Աբաշիձեի վարչակազմի անկումը Բաթումում հանգեցրեց Վրաստանում ռուսական ազդեցության գրեթե վերացմանը եւ այս երկրից ռուսական ռազմակայանների արագ դուրսբերմանը: Սակայն այն, ինչ գոյություն ունի այսօր, 2004-ից տարբերվում է ոչ սոսկ այն պատճառով, որ ներկա աբխազական ճգնաժամում նախաձեռնող կողմը ռուսներն են, այլ որովհետեւ վրացական ուղղությամբ տարվող ճնշումը Մոսկվայի ծավալած ավելի լայն կամպանիայի բաղկացուցիչն է: Այն կապված է ՆԱՏՕ-ի վերոհիշյալ բուխարեստյան որոշման հետ եւ Մոսկվայի պատկերացմամբ պետք է ազդանշան հանդիսանա առաջին հերթին ԱՄՆ-ի ու ԵՄ-ի համար, թե Ռուսաստանը պատրաստ է գործել նաեւ Ուկրաինայի եւ, արեւմտյան որոշ փորձագետների կարծիքով, բալթյան հանրապետությունների ուղղությամբ:

Ս.թ. մայիսի 11-ին գտնվելով Սեւաստոպոլում՝ Մոսկվայի քաղաքագլուխ Յուրի Լուժկովը հայտարարեց, թե ռուսական սեւծովյան նավատորմի գլխավոր ռազմակայանի պատկանելության հարցը Ռուսաստանը կլուծի իր «պետական իրավունքի» օգտին, այսինքն՝ հօգուտ իրեն[2]: Էլ ավելի ուշագրավ էր ռուսական արտգործնախարարության մայիսի 13-ի պատասխանը՝ կապված Լուժկովի հայտարարության առնչությամբ ուկրաինական կողմի պաշտոնական բողոքի հետ: Որեւէ բացասական կողմ չգտնելով Մոսկվայի քաղաքագլխի խոսքերում՝ Սերգեյ Լավրովի գերատեսչության պաշտոնական հայտարարության մեջ ասված է. «Յուրի Լուժկովը սոսկ արտահայտել է այն կարծիքը, որը համընկնում է ռուսաստանցիների մեծամասնության տեսակետի հետ»: Այլ կերպ ասած՝ Ռուսաստանը, փաստորեն, պաշտոնական մակարդակով հնարավորություն է ստեղծում վիճարկելու Ուկրաինայի պետական սահմանների լեգիտիմությունը:

Անկասկած, այդ դրույթի օգտին են խոսում նաեւ Ռուսաստանի պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովի մայիսի 11-ի հայտարարությունը, թե ներկայում Նովոռոսիյսկում կառուցվող ռազմածովային բազան դառնալու է ռուսական սեւծովյան նավատորմի եւս մեկ[3] հենակետը, ինչպես եւ՝ Ղրիմի ռուսական համայնքի մայիսի 14-ի դիմումը Ռուսաստանի Դաշնային խորհրդի ղեկավարությանը՝ չեղյալ հայտարա-

ռելու 1997թ. ռուս-ուկրաինական հայտնի պայմանագիրը եւ վերականգնելու «ժողովուրդների քաղաքական միասնությունը»[4]:

Բուխարեստում Միացյալ Նահանգներն ու նրա դաշնակիցները որոշեցին առաջինն անցնել կարմիր գիծը՝ հայտարարելով ՆԱՏՕ-ին Ուկրաինայի ու Վրաստանի անդամակցության անխուսափելիության մասին, սակայն խնդիրն այն է, որ ԱՄՆ-ում որոշեցին նման կտրուկ ձեւով սեղանին դնել ՆԱՏՕ-ին Ուկրաինայի ու Վրաստանի անդամակցության հարցը՝ շատ լավ հասկանալով, որ 2004թ. նարնջագույն հեղափոխությունից հետո Կիեւում շարունակվող քաղաքական անկայունությունը եւ Վրաստանի չլուծված հակամարտությունները Աբխազիայի ու Հարավային Օսիայի հետ չեն կարող երաշխավորել գործընթացի կանխատեսելի ավարտ: Ռուսաստանը նույնպես ձեռնամուխ է եղել «կարմիր գծերի» ոտնահարմանը, եւ ուկրաինական ու վրացական ուղղություններով ռուսական դիվանագիտական, տեղեկատվական եւ ռազմական նախաձեռնությունները դրա վկայություններն են[5]:

Հետեւաբար, եթե ներկայացվածը համապատասխանում է իրականությանը, ապա ներկայում աբխազական ճգնաժամում տեղ գտնող զարգացումների տրամաբանությունը տարբերվում է 2004թ. Աջարիայում կատարվածից: Իսկ եթե դա այդպես է, ապա վրացական ուղղությամբ պատերազմի բռնկման հավանականությունն անհրաժեշտ է բարձր գնահատել: Կարելի է ասել, որ առնվազն դրան են տանում վերջին շաբաթների ռուսական կողմի քայլերը:

Ռուսական կողմի արված քայլերն են՝

❖ ս.թ. ապրիլի 16-ին Ռուսաստանի այն ժամանակվա նախագահ Պուտինի հանձնարարությունը կառավարությանը՝ համակողմանի օգնություն ցույց տալ Աբխազիայի ու Հարավային Օսիայի բնակչությանը (ոչ միայն ՌԴ քաղաքացի հանդիսացող անձանց)՝ իրավական հարաբերությունների մեջ մտնելով աբխազական ու հարավօսական իշխանությունների հետ,

❖ Ռուսաստանի իշխանական (Դաշնային խորհրդի նախագահ Սերգեյ Միրոնով) ու դիվանագիտական (ԱԳՆ հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Վալերի Կենյակին) ներկայացուցիչների աննախադեպ սուր հայտարարությունները, թե Մոսկվան չի բացառում ուժի կիրառումը Աբխազիայում ու Հարավային Օսիայում իր քաղաքացիներին պաշտպանելու համար[6],

❖ մարտի 18-ից մայիսի 12-ն ընկած ժամանակահատվածում Աբխազիայի օդային տարածքում վրացական առանց օդաչու թռչող հետախուզական թվով 7 ինքնաթիռների ոչնչացումը (ուշագրավ է, որ այդ

ինքնաթիռներից 5-ը ոչնչացվեցին մայիսի 4-12-ն ընկած ժամանակահատվածում),

❖ եւ վերջապես, ապրիլի 30-ին ռուսական լրացուցիչ՝ մոտ 500 հոգանոց դեսանտայիններից ու ռազմական տեխնիկայի մի քանի տասնյակ միավորներից բաղկացած զորամիավորման մուտքը վրաց-աբխազական հակամարտության գոտի:

Այս ամենը կարող է տանել ռազմական բախման, որը Մոսկվայի կողմից շարունակում է դիտարկվել որպես Վրաստանը ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետ պահելու միակ գործուն միջոց: Սակայն այս պահի դրությամբ հիմնական հետեւությունը, թերեւս, այն է, որ ընթացող ճգնաժամում ԱՄՆ-ին ու նրա դաշնակիցներին չհաջողվեց Ռուսաստանի նկատմամբ գործադրված դիվանագիտական ճնշման միջոցով Թբիլիսիի համար հասնել անվտանգության երաշխիքների: Դրա մասին են խոսում, մասնավորապես, Ռուսաստանին ուղղված մայիսի 6-ի Սպիտակ տան հայտարարությունը՝ «դադարեցնել հետագա սադրանքները» Վրաստանի դեմ, ինչպես եւ մայիսի 14-ին ի հայտ եկած տեղեկությունը, թե Պենտագոնը կարող է Վրաստանում տեղակայել ԱՄՆ հակահրթիռային պաշտպանության համակարգի մասը հանդիսացող «Հ-դիապազոնի» ռադար: Նման կոշտ ձեւակերպումն ու ռուսական կողմի համար ցավոտ համարվող տեղեկության ի հայտ գալը վկայում են, որ Վրաստանին առնչվող ամերիկա-ռուսական հետկուլիսային բանակցություններն արդյունքի չեն հասել:

---

[1] Ստորեւ ներկայացնում ենք ՆԱՏՕ բուխարեստյան գագաթաժողովի հռչակագրի 23-րդ կետն ամբողջությամբ. «ՆԱՏՕ-ն ողջունում է Ուկրաինայի եւ Վրաստանի եվրաատլանտյան ձգտումը՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու գործում: Այսօր մենք համաձայնության եկանք այն մասին, որ այդ երկրները կդառնան ՆԱՏՕ-ի անդամ: Երկու պետություններն էլ արժեքավոր ներդրում են ունեցել Հյուսիսատլանտյան դաշինքի գործողություններում: Մենք ողջունում ենք Ուկրաինայում եւ Վրաստանում ժողովրդավարական բարեփոխումները եւ սպասում ենք ազատ եւ արդար օրենսդիր [մարմնի] ընտրություններ մայիսին Վրաստանում: Անդամակցության ուղիղ ճանապարհին Ուկրաինայի եւ Վրաստանի համար «Անդամակցության գործողությունների ծրագիրը» (ԱԳԾ, Membership Action Plan - MAP) հաջորդ կարեւոր քայլն է: Այսօր մենք հստակորեն նշում ենք, որ պաշտպանում ենք այդ երկրների թեկնածությունները ԱԳԾ-ին միանալու հարցում: Հետեւաբար, այժմ երկու երկրների հետ բարձր քաղաքական մակարդակով կսկսվի մեր ինտենսիվ փոխգործակցության փուլը, որպեսզի զբաղվենք

առկա չկարգավորված հարցերով՝ կապված ԱԳՇ-ին մասնակցելու նրանց թեկնածությունների հետ: Մենք հանձնարարել ենք [ՆԱՏՕ անդամ երկրների] արտաքին գործերի նախարարներին 2008թ. դեկտեմբերին կայանալիք նախարարների խորհրդակցության ժամանակ տալ առաջին գնահատականը իրականացված աշխատանքի վերաբերյալ: Արտաքին գործերի նախարարները լիազորված են որոշում կայացնելու ԱԳՇ-ին Ուկրաինայի եւ Վրաստանի միանալու հարցի առնչությամբ»:

[2] Մոսկվայի քաղաքագլուխը հիշեցրել է, որ 1948թ. Սեւաստոպոլը դարձել էր միութենական ենթակայության քաղաք եւ 1954թ. այն չէր մտել այն շրջանների ցանկի մեջ, որոնք Խրուշչովը հանձնել էր Խորհրդային Ուկրաինային: Նույն հայտարարությունը նա կրկնեց նաեւ մայիսի 13-ին՝ ուկրաինական կողմի բողոքից հետո: Ուշագրավ է, որ իր այդ հայտարարություններում Լուժկովն ավելի վեր է դասում ռուսական օրենսդրությունը, քան միջազգային իրավունքը:

[3] Դժվար թե պատահականություն լինի այն, որ Սեւաստոպոլի վերաբերյալ Լուժկովի ու ռուսական ԱԳՆ հայտարարությունների ֆոնին Սերդյուկովը Նովոռոսիյսկի մասին խոսեց ոչ թե որպես Սեւաստոպոլին փոխարինող ռազմակայան, այլ օգտագործեց «եւս մեկ» ձեւակերպումը:

[4] 1997թ. «Բարեկամության եւ համագործակցության մասին» ռուս-ուկրաինական պայմանագրով Ռուսաստանը ճանաչեց Ուկրաինայի ներկայիս սահմանները, սակայն այդ պայմանագրի ժամկետն ավարտվում է 2009թ.: Այն կարող է նաեւ չերկարացվել:

[5] Կասկածից վեր է, որ ս.թ. մայիսի 9-ին Մոսկվայի Կարմիր հրապարակում ռուսական բանակի զորահանդեսի ժամանակ 1990թ. ի վեր առաջին անգամ ռազմական տեխնիկայի օգտագործումը նույնպես ռուսական ընդհանուր կամպանիայի մասն էր:

[6] Այստեղ պետք է ավելացնել նաեւ Վրաստանում Ռուսաստանի դեսպան Վյաչեսլավ Կովալենկոյի մայիսի 1-ի հայտարարությունը, թե ՌԴ սահմանադրությունը թույլ է տալիս Մոսկվային պաշտպանել իր քաղաքացիներին այնտեղ, որտեղ որ անհրաժեշտ լինի՝ Աբխազիայում, Զանզիբարում, թե Անտարկտիդայում:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆԸ. *ՀԱԿԱԳԼՈԲԱԼԻՍՏՆԵՐ ԵՎ ԱԼՏԵՐԳԼՈԲԱԼԻՍՏՆԵՐ*

Սուրեն Մանուկյան

Գլոբալացումն իբրեւ ամերիկանացում

Որպես շարժում դեպի միասնական համաշխարհային շուկա, միասնական խաղի կանոններ եւ, ի վերջո, վարքի ու բարոյականության միասնական նորմեր՝ գլոբալացումը բնական գործընթաց է: Մարդկությունն իր պատմության ողջ ընթացքում այս կամ այն կերպ փորձել է իրականություն դարձնել համընդհանրացման իդեալը:

Այսօր, սակայն, այս շարժումը հայտնվել է մի հանգրվանում, երբ այն հստակ զուգակցվում է մեկ այլ երեւույթի՝ ամերիկանացման հետ: Գլոբալացման առաջամարտիկներն այն ամբողջովին վերածեւել են սեփական շահերին համապատասխան՝ հաշվի չառնելով այլ, ավելի թույլ դերակատարների եւ պետությունների կամքն ու ճակատագիրը: Վերազգային կորպորացիաները սերտորեն կապված են ԱՄՆ բանկային կապիտալի հետ: Խաղի կանոնները նույնպես հաստատվել են Համաշխարհային բանկի եւ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից՝ «Վաշինգտոնյան կոնսենսուսի» հիման վրա, ըստ որի, օրինակ, ՀԲ-ն եւ ԱՄՀ-ն վարկերի տրամադրումը կապում են որոշ, հենց ԱՄՆ շահերին համապատասխանող պայմանների հետ: Այս քաղաքականությունն անցած տասնամյակում ուղղակի փլուզեց շատ պետությունների տնտեսություններ:

Տնտեսական նվաճմանը զուգահեռ՝ ընթանում է նաեւ մշակութային էքսպանսիան. տարածելով ցածրորակ, բայց շատ գունեղ ու գրավիչ պատկերներ՝ կատարվում է ճաշակի եւ գեղեցիկի ընկալման պարզունակացում: Եվ այս ամենն ուղեկցվում է նեոլիբերալ գաղափարախոսության՝ իբրեւ միակ ընդունելի եւ ճշմարիտ արժեհամակարգային միավորի, տարածմամբ:

Նմանօրինակ գլոբալացումը, բնականաբար, չի կարող չառաջացնել հակազդեցություն:

Այն ինստիտուցիոնալացվում է երկու ուղղության մեջ, որոնք պայմանականորեն կարելի է անվանել հակագլոբալիստական եւ ալտերգլոբալիստական նախագծեր, եւ որոնք այսօր ընթանում են զուգահեռ:

Պարտիզանական դիմադրություն. հակագլոբալիստներ

1994թ. Մեխիկոյի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի շրջանավարտ, բանաստեղծ, էսսեիստ եւ ծրագրավորող Մարկոսը, գլխավորելով հնդկացիների պարտիզանական շարժումը՝ սապատիստական ազատագրական բանակը, եւ անարյուն հեղաշրջում իրականացնելով, վերցրեց իշխանությունը մեքսիկական Չիապոս նահանգում:

Ապստամբության պատճառները (պայմանավորված հնդկացիների էթնիկ գիտակցության վերածնունդով) նաեւ սոցիալական էին. 1994թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտավ Ազատ առեւտրի հյուսիսամերիկյան գոտու մասին պայմանագիրը (ՆԱՖՏԱ), որի պատճառով Մեքսիկայի բանվորները միանգամից կորցրին աշխատավարձի 26%-ը: Մարկոսը դարձավ Արեւմուտքի ձախ ծայրահեղական երիտասարդության կուռքը՝ ժամանակակից Չե Գեւարան: Մարկոսի փիլիսոփայական հայացքները, որոնցում միահյուսվում են մայա հնդկացիների առասպելական մոտիվները, համաշխարհային կապիտալիզմի քննադատությունը, Երրորդ աշխարհի ժողովուրդների եւ, մասնավորապես, հնդկացիների իրավունքների պաշտպանության ձգտումներն ու հեղափոխության կոչերը, յուրահատուկ հրովարտակներ դարձան ժամանակակից գլոբալացման հակառակորդների համար: Նա մահվան էր դատապարտում Վերազգային կորպորացիաների աշխարհը՝ գուշակելով նոր համաշխարհային պատերազմ, որի բարիկադներն անցնելու են ոտքի ելած ազգաբնակչության եւ վերազգային բուրժուազիայի միջեւ սահմաններով:

Սապատիստական բանակը հաջողությամբ դիմակայեց Մեքսիկայի իշխանությունների հարձակումներին եւ պահպանեց մայաների ինքնավարությունը: 2001թ. Մարկոսն անձամբ գլխավորեց «խաղաղ երթը դեպի Մեխիկո», որին միացան բազմաթիվ հայտնի մարդիկ, այդ թվում ռեժիսոր Օլիվեր Սթոունը, Նոբելյան մրցանակակիր Խոսե Սամարանգոն, «Մոնդ Դիպլոմատիկ» ամսագրի գլխավոր խմբագիր Իգնասիո Ռամոնեն, Ֆրանսիայի առաջատար ձախ տեսաբան Ռեժի Դեբրեն, Եվրախորհրդարանի մի շարք պատգամավորներ եւ այլք: Մեխիկոյում նա երեք հարյուր հազարանոց հանրահավաք կազմակերպեց եւ հայտարարեց, որ շարունակելու է պայքարը համաշխարհային կապիտալիզմի դեմ:

Մարկոսը եւ իր «սապատիստների» բանակը դարձան խորհրդանիշ, մասնավորապես, հակագլոբալիստների համար, որոնց շարժումն այսօր հենց այդպես էլ իրեն ընկալում է՝ իբրեւ յուրատեսակ համաշխարհային պարտիզանական բանակ:

Հակագլոբալիստները, միանշանակ մերժելով գլոբալացման ցանկացած ձեւ, նույնիսկ սեփական նոր ինքնություն են ձեւավորում. «մենք նոր առաջացող ազգ ենք, մենք սփռված ենք բոլոր օկուպացված տարածքներում եւ պետք է նախ իմանանք միմյանց մասին, իսկ հետո պարտիզանական դիմադրությունը համընդհանուր դարձնենք»: Փաստորեն, «դիմադրությունը» հենց այդ «նոր ազգին» պատկանելու նշանաբանը եւ գաղտնագիրն է:

Հակագլոբալիստական ազդեցիկ շարժումներից կարելի է նշել անարխիստական «Սեւ դաշինքը», որը «մասնագիտանում» է թանկարժեք խանութների եւ գրասենյակների ավերումների ու ոստիկանության հետ բախումների մեջ, իտալական «Ya Basta» կազմակերպությունը, որը հանդես է գալիս սապատիստների շարժման օժանդակության դիրքերից եւ նեոլիբերալիզմի դեմ, ինչպես նաեւ քաղաքական նկատառումներով գործող «Հակտիվիստ» հակերների միավորումը:

Երբ հակագլոբալիստները խոսում են համաշխարհայի հեղափոխության նախապատրաստության մասին, նրանք նկատի ունեն դրա բովանդակության, ձեւի եւ մեթոդի նախապատրաստումը եւ ոչ թե այդ հեղափոխության տեղն ու ժամանակը: Ընթանում են ամենօրյա աշխատանք, իրավիճակային գործողություններ, երբ փոքր խմբերն իրենց համար իբրեւ թիրախ ընտրելով վերազգային որեւէ կորպորացիա՝ փորձում են վարկաբեկել նրան եւ բացահայտել նրա բացասական էությունը՝ հակագովազդի, ցույցերի, ֆլեշ-մոբերի, մամուլում հրապարակումների միջոցով: Այս կետային հարվածները միտված են խարխլելու ամբողջ համակարգը:

Բազմաթիվ գործողություններ, որոնք իրականացնում են հակագլոբալիստները, հիմնականում համակարգվում են ինտերնետի միջոցով, որը թույլ է տալիս պահել հորիզոնական կապերը եւ անմիջականորեն փոքր շղթաներից կազմել խմբեր՝ խուսափելով դժվարաշարժ եւ ծախսատար հիերարխիկ կառուցվածքներից:

Ալտերգլոբալիստներ

Եթե հակագլոբալիստներն ընդհանրապես բացառում են գլոբալացումը որպես երեւույթ, ապա մեկ այլ հոսանք առաջարկում է գլոբալացման սեփական ընկալումը, այլընտրանքը:

Թեեւ հաճախ նրանց եւս համարում են «հակագլոբալիստներ», սակայն շարժման մասնակիցները չեն ցանկանում եւ նույնիսկ արգելում են օգտագործել այդ եզրը: Այս հոսանքը որպես ինքնանվանում ընտրել է «նոր հակակորպորատիվ շարժում», «նոր հակակապիտալիստական շար-

ժում» կամ «շարժում հանուն գլոբալ ժողովրդավարացման» անունները:

Այլընտրանքային գլոբալացում առաջարկելով՝ այն ստեղծում է սեփական համաշխարհային կառույցներ՝ հրավիրելով Համաշխարհային սոցիալական ֆորումներ, որոնք պետք է լինեն Միջազգային տնտեսական համաժողովի՝ Դավոսի այլընտրանքային տարբերակը: 2000-ից գործում է ալտերգլոբալիստների ընդհանուր տեղեկատվական ցանցը՝ IndyMedia-ն:

Այս շարժման հիմնական նպատակն է պայքարը գլոբալացման արատավոր ժամանակակից մոդելի դեմ, որը ձեւավորվել է համաշխարհային կապիտալի ազդեցությամբ եւ իր հետ բերում է զարգացած «ոսկե միլիարդի» եւ զարգացող «երրորդ աշխարհի» պետությունների միջեւ եկամուտների, կենսամակարդակի, առողջության, կրթության մակարդակների գնալով ավելացող խզում, վերազգային կորպորացիաներում ցածր որակավորման աշխատողների պայմանների անընդունելի մակարդակ, զանգվածային փոփ-մշակույթի գերիշխանություն, ազատ ստեղծագործության ճնշում եւ «ուղեղների ստանդարտացում», բնության նկատմամբ սպառողական եւ գիշատչային վերաբերմունք, նեոլիբերալիզմի գաղափարախոսության գերիշխանություն ամբողջ աշխարհում:

Ալտերգլոբալիստական շարժումը միատարր չէ: Դրանք հազարավոր կազմակերպություններ են, հիմնականում երիտասարդական եւ ձախ ուղղվածության շարժումներ, որոնցից ամենանշանավորը, թերեւս, «ԱՏՏԱԿ»-ն է:

1998թ. հունիսին մի քանի ֆրանսիական հրատարակչություններ, հասարակական կազմակերպություններ եւ արհմիություններ ստեղծեցին ընկերակցություն՝ քաղաքացիների օգտին ֆինանսական գործարքների հարկման հարցերում (ATTAC–Association for the Taxation of Financial Transactions for the Aid of Citizens), որն ունի 30 000 անդամ եւ մասնաճյուղեր աշխարհի տարբեր երկրներում: ԱՏՏԱԿ-ի հիմնական պահանջներից է «Տոբինի հարկի» սահմանումը, որով ֆինանսական գործարքների հարկման 0.1%-ը ուղղվելու է աղքատության դեմ պայքարի եւ երրորդ աշխարհի տնտեսության վերականգնմանը: ԱՏՏԱԿ-ը նաեւ վճռական է երրորդ աշխարհի պարտքերի ներման պահանջի հարցում: Կազմակերպության առաջնորդներից է ֆրանսիացի ֆերմեր Ժոզե Բովեն, որը հաճախ համարվում է այս շարժման խորհրդանիշը եւ հայտնի է դարձել սեփական տրակտորով Փարիզի արվարձաններից մեկում «Մակդոնալդսը» քանդելուց հետո: Կազմակերպության մյուս դեմքը Սյուզեն Ջորջն է, որն իր «Լուգանոյի զեկույցը» վեպում կանխագուշակել է կապիտալիստական մոնոպոլիաների կողմից Երկրի նվաճումը եւ ամբողջ երկրների ու ժողովուրդների ցեղասպանությունները:

Մեկ այլ ազդեցիկ ուժ է «Մարդկանց համաշխարհային գործողությունը», որը քննադատության է ենթարկում բոլոր տիպի կորպորացիաները եւ նրանց գործունեությունը, անցկացնում բողոքի ակցիաներ՝ ինչպես մեգապոլիսների փողոցներում, այնպես էլ գյուղական վայրերում: Նրա գործողություններից տպավորիչ են ֆերմերների բողոքի շարժումները Եվրոպայում եւ կոմունալ գյուղատնտեսական կոոպերատիվների անդամների ելույթները Լատինական Ամերիկայում ու Ասիայում:

Կազմակերպությունների մի մասը բացառում է բռնի գործողությունները՝ իր բողոքն արտահայտելով խաղաղ հանրահավաքների, ցույցերի եւ համերգների միջոցով: Այս չափավոր ուղղությունը նաեւ գնում է իշխանությունների հետ շփումների եւ բանակցությունների, երբ դա բխում է իրավիճակից: Մյուս մասն ավելի արմատական մեթոդների կողմնակից է՝ սկսած «Մակդոնալդս»-ների ապակիները կոտրելուց, մինչեւ իսկ Մեծ ութնյակի հանդիպումների վայրերում բախումներ կազմակերպելը (Սիեթլ, Քվեբեկ, Ջենովա), որոնք ուղեկցվում էին մեքենաներ այրելով եւ ոստիկանության վրա «Մոլոտովի կոկտեյլ» կիրառելով:

Մարգինալ հոսա՞նք, թե՞ գլոբալ նոր ուժ

Այլընտրանքային գլոբալիստները եւ հակագլոբալիստները երկար ժամանակ դիտվում էին իբրեւ մարգինալ հոսանքներ, որոնց նպատակն ընդամենը աղմուկն է եւ մանր, ժամանակավոր, տեղային խնդիրների լուծումը:

Հակագլոբալիստները եւ ալտերգլոբալիստներն արդեն հասել են կարեւոր արդյունքների: Նրանք կոտրել են արեւմտյան ՁԼՄ-ով քարոզվող այն առասպելը, թե մարդկությունը մտնում է հումանիզմի, առաջադիմության եւ համերաշխության դարաշրջան:

Սակայն վերջին զարգացումները հնարավորություն են տալիս նրանց ավելի մեծ դերակատարում ունենալ միջազգային քաղաքականությունում: Գների կտրուկ եւ շարունակական աճն էներգակիրների ու սննդամթերքի շուկաներում, դրանց դեմ աշխարհի տարբեր մասերում բռնկվող ընդվզումները ցույց են տալիս, որ ժամանակակից տնտեսական համակարգը հեռու է իդեալական լինելուց: Դա գլոբալիստներին եւ հակագլոբալիստներին տալիս է հնարավորություն՝ գլխավորելու գլոբալ սոցիալական ցնցումները:

Դրա համար կան լուրջ հիմքեր եւ ներուժ.

1. Հակագլոբալիստների եւ ալտերգլոբալիստների պայքարի կարեւոր նախադրյալներից է համարվում անընդունելի համակարգի ապակայու-

նացումը, որը նրանց պայքարի նշանակետն է, իսկ ժամանակակից համաշխարհային զարգացումները հենց դրան էլ տանում են:

2. Երկու հոսանքներն էլ ունեն խարիզմատիկ առաջնորդներ եւ պարզ, ընկալելի ու գրավիչ գաղափարախոսություն, որը համակրանքով է ընդունվում հասարակական գրեթե բոլոր շերտերի կողմից՝ միջին խավի, ինտելեկտուալների, արվեստի գործիչների, բանվորների, գյուղացիների, կրոնական վերնախավի ներկայացուցիչների, երիտասարդության եւ այլն:

3. Կառուցվածքային առումով երկու հոսանքներն էլ լավ կազմակերպված են եւ համակարգված: Ունեն կապեր եւ հստակեցված, աշխատող փոխգործակցության ու փոխօգնության համակարգ: Նրանք երբեմն նույնիսկ միավորվում են եւ համատեղում ջանքերը մարտավարական խնդիրների շուրջ:

4. Ունեն նվիրյալների բանակ, որոնք պատրաստ են ցանկացած գործողությունների՝ առաջնորդների հրահանգի դեպքում:

5. Այս շարժումները կարող են ապավինել նաեւ շատ պետությունների օժանդակությանը: Դրանք այսօր, փաստորեն, ազգային պետության գաղափարի պաշտպանն են՝ գլոբալացվող եւ պետական սուվերենությունը «լղոզող» աշխարհում: Ավելին, շատ պետություններ, որոնց «դուր չի գալիս» ամերիկանացման ժամանակակից միտումը, կարող են օգտագործել այս հոսանքները՝ գոյություն ունեցող աշխարհակարգը սասանելու եւ ի վերջո փոխելու համար:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ. *ՀՈՐԴԱՆԱՆԻ ՎԵՐԱՃՈՒՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ*

Սեւակ Սարուխանյան

Խորհրդային Միության փլուզումից հետո հաստատված ամերիկյան միաբեւեռ աշխարհակարգի հետեւանքները, թերեւս, առավել ցայտուն դրսեւորվեցին Մերձավոր Արեւելքում, որը մինչ այդ խորհրդա-ամերիկյան հակամարտության կարեւորագույն գոտիներից էր: Սակայն այսօր հենց նույն Մերձավոր Արեւելքում է ամենից վառ արտահայտվում միաբեւեռ աշխարհակարգի նահանջը: Այն դրսեւորվում է երկու հիմնական ձեւով.

1. Կտրուկ աճել է տարածաշրջանային մի շարք պետությունների անկախության աստիճանը: Այստեղ հարկ է նշել Իրանին, որը դարձել է Պարսից ծոցի ամենաազդեցիկ եւ անկախ խաղացողը, Թուրքիային, որը սկսել է ավելի հետեւողականորեն իրականացնել սեփական շահերի պաշտպանությունը տարածաշրջանում, Սաուդյան Արաբիային, որի քաղաքական ապագան շատ քիչ ամերիկյան փորձագետներ են տեսնում ԱՄՆ-ի հետ դաշինքի տեսքով:

2. Տարածաշրջանում առաջ են եկել «նոր» խաղացողներ: «Համասը» օրինական գերիշխանություն է հաստատել Գազայի հատվածում, «Հիզբալլահը» հասցրել է դառնալ Լիբանանում ամենաազդեցիկ քաղաքական եւ ռազմական ուժը, Իրաքը ողողվել է ամենատարբեր կազմակերպություններով, որոնց միայն մի մասն է, հավանաբար, ուղղորդվում ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների կողմից:

«Նոր» խաղացողները, որոնց դերն անցյալում այսչափ ազդեցիկ եւ նշանակալի չի եղել, ներկայում տարածաշրջանային քաղաքական զարգացումների ակտիվ մասնակիցներ են: Հանդիսանալով ցանցային կառույցներ՝ նրանք ունակ են ցանկացած տիպի պետական համակարգի կազմալուծմանը կամ սեփական շահերին հասնելու համար՝ պետական ռեսուրսների օգտագործմանը:

Այս պայմաններում ԱՄՆ տարածաշրջանային ռազմավարությունը, որն, ինչպես նշում է ամերիկյան հայտնի վերլուծաբան Ս.Հերշը, գրեթե միշտ միտված է եղել տարածաշրջանային միջպետական դաշինքների ստեղծմանը, լուրջ «ճեղքեր է տալիս»: Հիմնական ճեղքերից մեկն այն է, որ ստեղծված պայմաններում գրեթե անհնար է դառնում Իսրայելի

անվտանգության հետագա պաշտպանությունն ավանդական ձեւերով: «Հիզբալլահի» եւ Իսրայելի վերջին պատերազմը ցույց տվեց, որ ամերիկյան օգնությունը Իսրայելին հիմնականում սահմանափակվել է զինամթերքի տրամադրմամբ: Իսրայելական մամուլում վերջին 2 տարիների ընթացքում տեղ գտած քննադատությունները ԱՄՆ ոչ ակտիվ աջակցության վերաբերյալ հաշվի չեն նստում մի շատ կարեւոր հարցի հետ. «իսկ ինչպե՞ս կարող էին օգնել ամերիկացիները»: Տարածաշրջանային նոր զարգացումների պայմաններում ամերիկյան հնարավորությունները սահմանափակ են, չնայած Իրաքում եւ Պարսից ծոցում տեղակայված է ամերիկյան հսկայական ռազմուժ:

ԱՄՆ հին դաշնակից Իսրայելի համար վերջին զարգացումները Մերձավոր Արեւելքում լուրջ վտանգ են ներկայացնում: Ի՞նչ ապագա ունի Իսրայելն այն պայմաններում, երբ ամերիկյան ազդեցությունը տարածաշրջանում թուլանում է, Իսրայելի եւ Պաղեստինի արաբական բնակչությունը՝ աճում, Սիրիայում եւ Եգիպտոսում ամրապնդվում են իսլամական ծայրահեղականության դիրքերը, բուն իսրայելական հասարակությունը գտնվում է մասնակի արժեքային ճգնաժամի մեջ: Սրանք հարցեր են, որոնք հուզում են ոչ միայն Իսրայելին, այլ նաեւ Միացյալ Նահանգներին:

* * *

Իսրայելի համար, անկասկած, ապագա կայուն զարգացում ապահովելու հարցում ամենաշահեկանը կլիներ Իրանի եւ Սիրիայի հետ հարաբերությունների կարգավորումը: Այս կարծիքին է նաեւ Մերձավոր Արեւելքի ինստիտուտի տնօրեն Ե.Սատանովսկին: Սակայն նման հնարավորությունն այսօր գրեթե անհնար է թվում:

Վերջին տարվա ընթացքում Իսրայելում եւ ԱՄՆ վերլուծական շրջանակներում բավական տարածում են գտել տեսակետներն այն մասին, որ ԱՄՆ-ի եւ Իսրայելի համար ձեռնտու տարածաշրջանային համագործակցության ձեւաչափ կարող է հանդիսանալ Իսրայել–Հորդանան ռազմավարական դաշինքը: Հորդանանի եւ Իսրայելի միջեւ 1994թ. խաղաղության հաստատումից հետո երկու պետությունների հարաբերությունները բավական ջերմացել են: Հորդանանի իշխանությունները երկրի տարածքում հաջողությամբ կասեցնում են «Համասի» եւ «Իսլամական ջիհադի» գործունեությունը: Խոսելով Հորդանանի հետ համագործակցության խորացման անհրաժեշտության մասին՝ իսրայելական եւ ամերիկյան վերլուծաբանները նշում են.

1. Հորդանանում իշխող Հաշեմիների արքայական տունը շահագրգռված չէ երկրում եւ տարածաշրջանում իսլամական ծայրահեղակա-

նության աճով, այն դիտարկում է որպես վտանգ իր իշխանության պահպանման համար:

2. Հորդանանը հետաքրքրված է Պաղեստինի հիմնախնդրի արագ կարգավորմամբ, քանի որ այն կխթանի երկրի զարգացումը:

3. Իսրայելա-հորդանանյան հարաբերությունների ամբողջական բարելավումը մեծ խթան կհանդիսանա Հորդանանի տնտեսության, ֆինանսական համակարգի եւ տեխնոլոգիական զարգացման համար:

Ուշագրավ է վերջին շրջանում Իսրայելում տարածում ստացած այն կարծիքը, թե Պաղեստինի Ինքնավարությանն անկախություն տալու փոխարեն՝ այն պետք է հանձնել Հորդանանին: Այս կարծիքը կիսող գիտնականները, որոնցից է, ասենք, հետսիոնիզմի եւ արաբա-իսրայելական հակամարտության խոշոր մասնագետ Ա.Էպշտեյնը, եզրակացնում են, որ Պաղեստինի Ինքնավարությունում աճող ծայրահեղականության կասեցման միջոց կարող է հանդիսանալ նրա էլիտայի ինտեգրումը հենց բուն արաբական պետության քաղաքական համակարգի մեջ, ինչը հնարավոր է միայն այս տարածքը Հորդանանին հանձնելու դեպքում:

Իսրայել–Հորդանան ռազմավարական դաշինքի ստեղծումը պետք է ուղեկցվի Հորդանանի զարգացմամբ եւ այս երկրի՝ կարեւոր տարածաշրջանային խաղացողի վերածմամբ: Վերջին մի քանի տարիների ընթացքում իրենց կապիտալը Հորդանան են տեղափոխել իրաքյան, լիբանանյան մեծահարուստ շատ ընտանիքներ (այդ թվում նաեւ հայեր): Սպասվում է բնակչության աճող ներհոսք մոտակա տարիների ընթացքում, այն չափով, որ 2020թ. Հորդանանի բնակչությունը կգերազանցի 10 միլիոնը՝ ներկայիս 6-ի փոխարեն (սա այն պարագայում, երբ ծնելիությունը Հորդանանում բարձր չէ. 1 կնոջը բաժին է ընկնում 2.46 երեխա): Աճել են արտասահմանյան ներդրումները Հորդանանի տնտեսության մեջ, իսկ Համաշխարհային բանկի 5 մլրդ դոլար վարկի հաշվին մոտակա տարիներին մայրաքաղաք Ամանի մոտ կառուցվելու է մեկ միլիոնանոց գերժամանակակից քաղաք: Հորդանանում շուտով, հավանաբար՝ ֆրանսիացիների աջակցությամբ, կսկսվի ատոմային էլեկտրակայանի կառուցումը:

Ակնհայտ է, որ Հորդանանի վերածվելը տարածաշրջանային կենտրոնի եւ նրա ռազմավարական համագործակցությունը Իսրայելի հետ, խիստ շահեկան է վերջինիս համար: Ունենալով կայուն եւ արագ զարգացող արաբական դաշնակից՝ Իսրայելը մեծ քայլ կկատարի տարածաշրջանային սեփական անվտանգության համակարգի ստեղծման ուղղությամբ:

ՀԱԿԱՀԻՐԱՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԱԲԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Արաքս Փաշայան

2008թ. մարտի 29-30-ը Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ)՝ Դամասկոսում տեղի ունեցած գագաթաժողովը վերստին ի հայտ բերեց այն հակասությունները, որ կան Իրանի եւ արաբական աշխարհի միջեւ: Արաբական առաջատար պետությունները (մասնավորապես, Սաուդյան Արաբիան, Ծոցի երկրները, Եգիպտոսը, Հորդանանը), որոնք իրենց տարածաշրջանային քաղաքականության մեջ որոշակիորեն հաշվի են առնում ամերիկյան հետաքրքրությունները, անհանգստացած են արաբական քաղաքականության մեջ Իրանի ակտիվ միջամտության փաստով:

Հակահիրանական միտումներն արաբական աշխարհում նոր երեւույթ չեն եւ պայմանավորված են քաղաքական ու կրոնական գործոններով: Իրանն այն բացառիկ իսլամական պետություններից է, որի բնակչության մեծ մասը շիա է: Մինչդեռ արաբական երկրների եւ ընդհանրապես իսլամական աշխարհի հիմնական հատվածը դավանում է սուննիզմ:

Իսլամի այս երկու ճյուղերի տարբերությունները դրսեւորվում են կրոնական պրակտիկայում, քաղաքական մշակույթներում, ավանդույթների, սովորույթների, նաեւ՝ դավանաբանության մեջ, իսկ հակասությունները սկիզբ են առել դեռեւս իսլամի պատմության վաղ փուլում:

Միջազգային հարաբերություններում շիական գործոնի ակտիվացումն անմիջականորեն կապված է Իրանի արտաքին քաղաքականության հետ: Թեհրանը նպատակ ունի գերակայել ոչ միայն շիական աշխարհում, այլեւ տարածաշրջանում, ինչի ապացույցն Իրաքում եւ Լիբանանում իրանական քաղաքականությունն է: Սուննի աշխարհում նման հավակնությամբ հանդես է գալիս Սաուդյան Արաբիան՝ որպես իսլամի հայրենիք, որի արտաքին քաղաքական կողմնորոշումները որոշակիորեն հակոտնյա են իրանականին:

Ծոցի երկրների, մասնավորապես՝ Սաուդյան Արաբիայի եւ Իրանի հարաբերություններում դեռեւս սառը պատերազմի շրջանում առկա էր որոշակի լարվածություն: 1960-ականների վերջին, երբ բրիտանական կառավարությունը հայտարարեց, որ 1971-ին դուրս է բերելու զորքերը

տարածաշրջանից, առաջացած վակուումը ձգտում էր լրացնել շահական Իրանը, որի համար Ծոցի քաղաքականությունը կարեւոր ռազմավարական նշանակություն ուներ: 1957թ. իրանական կառավարության որոշմամբ՝ Բահրեյնը հայտարարվել էր Իրանի XIV նահանգ: 1971թ. իրանական ուժերը գրավեցին Արաբական Միացյալ Էմիրություններին պատկանող եւ Ծոցի ջրերում գտնվող երեք կղզիները՝ Աբու Մուսան, Մեծ եւ Փոքր Թոմբերը, որոնց նկատմամբ Իրանը միշտ էլ հավակնություններ ուներ: Այդպիսով, Իրանը վերահսկողություն հաստատեց Հորմուզի նեղուցում:

Կղզիների գրավումն արաբական աշխարհում բացասական արձագանք գտավ: Վաթսուն տոկոսից ավելի շիա բնակչություն ունեցող Իրաքը, որ ձգտում էր կանխել Իրանի հարաճուն առաջխաղացումը եւ սեփական ազդեցությունն ունենալ Միջին Արեւելքում, խզեց դիվանագիտական հարաբերություններն Իրանի հետ: Հատկանշական է, որ վերջերս Դամասկոսում տեղի ունեցած ԱՊԼ գագաթաժողովում ընդունված կոմյունիկեում ամրագրված է երեք կղզիների հարցը: Հանդիպմանը ԱՊԼ գլխավոր քարտուղար Ամր Մուսան Իրանին նախազգուշացրեց, որ եթե կղզիները չվերադարձվեն, ապա իրենք ստիպված կլինեն դիմել Հաագայի միջազգային դատարան:

1979թ. Իրանում իսլամական հեղափոխությունը լարվածության նոր ալիք առաջ բերեց: Ծոցի արաբական երկրները, եւ հատկապես Իրաքը, զգուշանում էին «իսլամական հեղափոխության արտահանման»՝ Թեհրանի որդեգրած քաղաքականությունից: Գաղափարախոսական տարաձայնություններն ի վերջո հանգեցրին Իրանի եւ Իրաքի միջեւ լայնածավալ պատերազմի, որի ընթացքում (1980–1988) Ծոցի երկրներն աջակցեցին Իրաքին, իսկ Սիրիան՝ Իրանին:

1981թ. Սաուդյան Արաբիայի նախաձեռնությամբ կազմավորվեց Ծոցի արաբական երկրների համագործակցության խորհուրդը, որի մեջ մտան Ծոցի վեց արաբական երկրներ (Իրանից եւ Իրաքից բացի), որին մինչ օրս չի հաջողվել մշակել համատեղ անվտանգության համակարգ նաեւ Իրանի հակազդեցության պատճառով: Վերջինս ձգտում է մաս կազմել Ծոցի համատեղ անվտանգության համակարգի ձեւավորմանը, նաեւ՝ տարածաշրջանի երկրների հետ բազմակողմ համագործակցության հաստատմանը:

Իսլամական հեղափոխությունից հետո Իրանի արտաքին, այդ թվում՝ արաբական քաղաքականության մեջ զգալի փոփոխություններ տեղի ունեցան: Իրանը հայտարարեց, որ աջակցում է արաբական, մասնավորապես՝ պաղեստինյան, հիմնախնդիրներին: Հակահիսրայելա-

կան հռետորականությունը նպաստեց, որպեսզի Իրանն ամրապնդի դիրքերը Միջին Արեւելքում: Իրանի անմիջական մասնակցությամբ եւ հովանավորությամբ ստեղծվեց լիբանանյան «Հիզբալլահ» շարժումը, որը տարածաշրջանում Իրանի կարեւորագույն հենակետերից մեկն է: 2006թ. Իսրայելի պատերազմը Լիբանանի դեմ, որն ուղղված էր «Հիզբալլահի» ռազմական հենակետերի ոչնչացմանը, ցույց տվեց, որ Իրանը ԱՄՆ-ի եւ Իսրայելի հետ հնարավոր հակամարտության դեպքում կարող է նաեւ առավելություններ ունենալ: Պատերազմի օրերին Սաուդյան Արաբիայի Շուրայի խորհրդի անդամներից մեկը՝ շեյխ Ալ-Օբիկանը, հայտարարեց, որ շարիաթի տեսանկյունից «Հիզբալլահի» գործունեությունն անօրինական է, իսկ կառույցը ջիհադի կոչեր անելու իրավունք չունի:

Ծոցի երկրներն անմիջական վտանգ են տեսնում Իրանի արտաքին քաղաքականությունից: Մեկ անգամ չէ, որ նրանք քննադատել են Իրանի միջուկային ծրագիրը, քանի որ այն խախտում է տարածաշրջանում գոյություն ունեցող ուժերի հավասարակշռությունը: 2007թ. արաբական հասարակական առանձին շրջանակներ Ծոցի երկրների համագործակցության խորհրդին կոչ արեցին Իրանի դեմ միացյալ ճակատ ստեղծել: Անդամ երկրները մեղադրվում էին Իրանի կողմից իրենց ինքնիշխանությանը սպառնացող անուղղակի եւ ուղղակի վտանգներն անտեսելու մեջ: Նմանօրինակ խնդիրները պարբերաբար անդրադարձ են գտնում արաբական մամուլում: Քուվեյթյան «Ասսիյասա» օրաթերթի 2007թ. նոյեմբերի համարներից մեկն այս կապակցությամբ մեջբերում է իրանական «Քայհան» թերթի խմբագրի այն դիտարկումը, թե Բահրեյնը եւ երեք կղզիները պատկանում են Իրանին, նաեւ՝ Իրանի հոգեւոր առաջնորդի ռազմական գծով խորհրդական Ալի Շամխանիի այն հայտարարությունը, որ եթե ԱՄՆ-ը հարձակվի իր երկրի միջուկային օբյեկտների վրա, իրենք պատերազմ կսկսեն տարածաշրջանի երկրների դեմ:

Իրանը մեղադրվում է Իրաքում ստեղծված անկայունության մեջ եւս: Լոնդոնում հրատարակվող սաուդական «Աշ-շարկ ալ-աուսատ» թերթի 2007թ. հոկտեմբերի 9-ի խմբագրականում քննարկվում է Իրաքի հեռանկարը, նշվում, որ Իրաքից ամերիկյան զորքերի դուրս գալուց հետո այդ երկրում անմիջապես կհաստատվեն Միջին Արեւելքում իրենց ազդեցությունը ձգտել հաստատող Իրանն ու Սիրիան: Թերթը նաեւ նշում է, որ կրոնաքաղաքական շարժումներին աջակցելու առումով՝ Իրանը եւ Սիրիան առաջնորդվում են երկակի չափանիշներով. մի կողմից՝ Իրանը պայքարում է Իրաքի սուննիների դեմ, մյուս կողմից՝

համագործակցում պաղեստինյան «Համասի» հետ, որը սուննիական շարժում է. իր հերթին, Սիրիան իր երկրում ճնշում է «Մուսուլման եղբայրներին», սակայն աջակցում է «Համասին» եւ «Հիզբալլահին»: Ի դեպ, վերոնշյալ խմբագրականը չի բացառում, որ Իրաքից եւ Լիբանանից հետո իրանական-իսլամական հեղափոխության պաշարման մեջ հայտնվի Ծոցի շրջանը, որտեղ ապրում են զգալի թվով շիաներ:

Վերոնշյալ «Աշ-շարկ ալ-աուսատ» թերթը, 2008թ. ապրիլի իր համարներից մեկում, անդրադառնալով Իրաքում իրանական միջամտությանը, զետեղել է Իրաքի ազգային անվտանգության խորհրդական Մուվաֆակ Ալ-Ռուբայիի տեսակետը, որի համաձայն՝ Միջին Արեւելքում ահաբեկչությունը կարող է արմատախիլ արվել միայն ռեգիոնալ համագործակցության միջոցով, սակայն այս նպատակին հնարավոր չի լինի հասնել այնքան ժամանակ, քանի դեռ Իրանը եւ Սիրիան շարունակում են աջակցել ահաբեկիչներին: Նշվում է, որ Իրանն աջակցում է Մուկթադա Աս-Սադրի կողմից ղեկավարվող Մահդիի բանակին, ինչպես նաեւ ռազմաքաղաքական այլ կառույցների, որոնք ծառայում են Իրանի շահերին: Ըստ այդմ՝ Իրանի վերջնական նպատակն է Իրաքում իրանամետ շիա կառավարության ստեղծումը, ինչը երբեք տեղի չի ունենա, քանի որ Իրաքի շիաները, որոնք բնակչության մեծամասնությունն են, արաբական ինքնության կրողներ են:

2008թ. մարտի 26-ին կատարական «Ալ-արաբ» օրաթերթը հարցազրույց է հրատարակել իրաքյան «Համաս» կազմակերպության խոսնակ Ահմադ Սալահ Ադ-Դինի հետ, ով նշում է, թե իրաքյան «Ալ-կաիդան» ռազմական, ֆինանսական եւ տարաբնույթ այլ օգնություններ է ստանում Իրանից եւ չնայած սուննիական ուղղվածությանը՝ իր պայքարն ուղղել է դիմադրության մյուս սուննի խմբավորումների դեմ: Խոսնակը նշում է, որ Իրանը ցանկանում է փոխել Իրաքի, հատկապես՝ Բաղդադի ժողովրդագրությունը հօգուտ շիաների: Այս համատեքստում Իրանն առավել մեծ թշնամի է դիտարկվում, քան ԱՄՆ-ը:

Իսկ սաուդական մամուլը Իրանին մեղադրում է նաեւ Լիբանանում ժողովրդագրական փոփոխություններին նպաստելու մեջ, «Հիզբալլահը» մեղադրվում է այն բանում, որ զոհում է Լիբանանը՝ հանուն Իրանի եւ Սիրիայի հետաքրքրությունների:

Այսպիսով, Իրանը ոչ համարժեք է ընկալվում արաբական շրջանակներում: Անընդունելի է համարվում միջարաբական քաղաքականության ավանդական ոլորտներում՝ Պաղեստինում, Իրաքում, Լիբանանում, Իրանի չափազանց ակտիվ մասնակցությունը: Սիրիայի եւ Իրանի միջեւ օրեցօր խորացող համագործակցությունը ռազմաքաղաքական եւ

այլ ոլորտներում, նրանց աջակցությունը «Հիզբալլահին», «Իսլամական ջիհադին», «Համասին», «Ալ-ֆաթհ ալ-իսլամին» հակազդեցությամբ է ընդունվում Ծոցի երկրներում:

Թե՛ Սիրիան, թե՛ Իրանը մեղադրվում են Լիբանանում ներքաղաքական ճգնաժամին նպաստելու, Իրաքում եւ Պաղեստինում իրավիճակի կայունացմանը խոչընդոտելու, ծայրահեղական խմբավորումներին աջակցելու մեջ: Ակնհայտ է, որ միեւնույն տարածաշրջանում գտնվող Իրանի եւ արաբական երկրների միջեւ առկա են աշխարհաքաղաքական, գաղափարախոսական եւ դավանաբանական տարբերություններ, որոնք արգելքներ են ստեղծում համագործակցության եւ փոխադարձ վստահության ճանապարհին:

ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՍՈՒՄ

Վլադիմիր Իվանով

Վերջին ժամանակներս Սպիտակ տունը բազմիցս է հայտարարում, որ Թեհրանի միջուկային ծրագրի խնդրի լուծումը հանձնելու է բացառապես ամերիկյան դիվանագետների իրավասությանը: Սակայն ԱՄՆ հրեական համայնքի առաջնորդներից մեկը վերջերս լրագրողներին հայտնեց, թե իրանական օբյեկտները գրոհելու պլանը ոչ միայն դրված է պենտագոնյան զորահրամանատարների սեղաններին, այլեւ շուտով կարող է սկսվել դրա գործնական իրականացումը: Այն միայն ճշտվում է՝ կապված իսրայելական հատուկ ծառայություններից ստացված նոր տվյալների հետ: Նրա մեջ գլխավոր դերը վերապահված է ԱՄՆ Ռազմաօդային ուժերին: Ընդամենը նախատեսվում է ոչնչացնել 1500 նշանակետ: Դրանք Իրանի միջուկային ենթակառուցվածքի տարրերն են, ռազմակայանները եւ հակաօդային պաշտպանության զորամասերի դիրքերը:

Լրագրողներն իրենց զրուցակցից նաեւ իմացան, որ թեեւ Իսրայելը չի մասնակցելու իսլամական հանրապետության վրա հարձակմանը, միեւնույն է՝ պատրաստվում է ծանր կորուստների: Որովհետեւ Թել Ավիվում համոզված են, որ ամերիկյան ռմբահարումներին ի պատասխան՝ Թեհրանն անպատճառ հարվածներ կհասցնի հրեական պետությանը:

* * *

Ապրիլի 6-10-ը Իսրայելում անցկացվեցին այս երկրի պատմության ընթացքում քաղաքացիական պաշտպանության ամենախոշոր զորավարժությունները՝ «Շրջադարձային կետ-2» ծածկանվամբ, որն ընդգրկեց երկրի ողջ տարածքը: Ձեւականորեն դրանք անցան վերջերս կրկին կազմավորված Արտակարգ իրավիճակների ազգային վարչության հովանու ներքո: Հրեական պետությունում միշտ այս կառույցը ստեղծվում է, երբ նրա դեմ հառնում են լուրջ խնդիրներ: Զորավարժություններին մասնակցում էին բոլոր ուժային գերատեսչությունները եւ քաղաքացիական նախարարությունները, բժշկական հիմնարկները, փրկարար ծառայությունները: Այնտեղ ներգրավված էին տասնյակ հազարավոր մասնագետներ ու շարքային քաղաքացիներ:

Զորավարժությունների սկսման նախօրեին Իսրայելի պաշտպանության բանակի (Ցախալ) ներկայացուցիչների հնչեցրած հայտարարություն-

ներում ասվում էր, որ այն կրում է պլանային բնույթ եւ ամենեւին կապված չէ Մեծ Մերձավոր Արեւելքի տարածաշրջանում ստեղծված իրավիճակի հետ: Միաժամանակ, պաշտպանության նախարարության ներկայացուցիչներն ընդունեցին, որ միջոցառումը պլանավորվեց այն բանից հետո, երբ իսրայելական հատուկ գործակալներին հաջողվեց հայթայթել տեղեկություններ ահաբեկչական խմբավորումների կողմից հրեական պետությունը շրջապատող երկրներում նորագույն հրթիռների ձեռքբերման, արաբների շրջանում Իսրայելի դեմ արմատական միջոցների կիրառման կողմնակիցների աճի եւ Իրանի կողմից միջուկային հարվածի հավանականության մեծացման մասին:

Զորավարժությունների ընթացքում Իսրայելի ողջ տարածքում տեղակայվել էին անվտանգության ուժեր, վթարային-փրկարարական ծառայությունների ստորաբաժանումներ եւ արտակարգ իրավիճակների գծով տասնյակ մասնագիտական կենտրոններ: Հրթիռային գրոհներին ու սովորական զինատեսակներից հարվածներին հակադարձելուց բացի, մշակվել էին նաեւ զանգվածային ոչնչացման միջոցների օգտագործմամբ հարձակումներին դիմագրավելու միջոցառումներ եւ դրանց հետեւանքների վերացման մեթոդներ: Ե՛վ երկրի աշխատունակ բնակչությունը, ե՛ւ խոր ծերունիները, ե՛ւ բարձր ու կրտսեր դասարանների աշակերտները մասնակցում էին այդ գործողությանը: Նրանց սովորեցնում էին տարհանման եւ ամրացված բունկերներում ապրելու կանոններ:

Ապրիլի 7-ին Իսրայելի նախարարների կաբինետն անցկացրեց արտակարգ խորհրդակցություն՝ իմիտացնելով պատերազմի սկիզբ: Իսկ հաջորդ օրը Ավետյաց երկրի բոլոր քաղաքներն ու ավանները թնդացին շչակների ոռնոցից, որոնք իսրայելցիներին զգուշացնում էին վտանգի մասին: Մասնագետների գնահատումներով՝ այդ զորավարժությունների վրա ծախսվել է շուրջ երկու տասնյակ միլիոն դոլար:

Իսրայելցի քաղաքական գործիչներն ու զինվորականները հայտարարում են, թե մասշտաբային միջոցառման գլխավոր նպատակը եղել է խնդիրների մշակումը, որոնց հետ 2006թ. պատերազմում բախվեց Իսրայելը: Այն ժամանակ «Հիզբալլահը» լիբանանյան տարածքից նրա քաղաքների վրա տեղաց հարյուրավոր հրթիռներ: Ո՛չ հատուկ կառույցները, ո՛չ քաղաքացիական գերատեսչությունները, ո՛չ էլ, առավել եւս, հասարակ տեղաբնակները պարզապես պատրաստ չէին իրադարձությունների նման շրջադարձին: Ըստ զինվորականների հայտարարության, իրենք ցանկացել են երկու տարվա վաղեմության կամպանիայից համապատասխան դասեր քաղել, որպեսզի հնարավորինս առավելագույն չափով բացառվեն կորուստները, եթե նմանատիպ իրավիճակը որեւէ կերպ կրկնվի:

Անցկացվող զորավարժությունների կապակցությամբ հեռուստատեսային ծրագրերում մտցվել էին համապատասխան ճշտումներ: Իսրայելական հեռուստատեսության շատ ալիքներով քաղաքացիներին՝ ներառյալ երեխաներին եւ անչափահասներին, սովորեցնում էին հարձակման դեպքում պահվածքի կանոնները: Նրանց ցուցադրում ու բացատրում էին, թե ինչպես ընտրել բնակարանում ամենաանվտանգ տեղը եւ ինչ անել գնդակոծումների դեպքում:

Թել Ավիվում, Ցախալի վիրավոր զինվորների պատվին հավաքում ելույթ ունենալիս, Իսրայելի պաշտպանության նախարար Էհուդ Բարաքն ասաց. «Մենք ձգտում ենք խաղաղության, այլ ոչ թե պատերազմի: Սակայն վաղուց է հայտնի՝ ով ուզում է խաղաղություն, պետք է պատրաստվի պատերազմի»: Իսրայելի պաշտպանության նախարարության ղեկավարի խորին համոզմամբ՝ դա նշանակում է, որ հրեական պետության բանակը պետք է ընդունակ լինի «ցանկացած ռազմական կոնֆլիկտում հասնել վճռական եւ անվիճելի հաղթանակի»:

Իսրայելցի քաղաքական գործիչները հայտարարում են, թե իրենց գործողություններն ուղղված չեն տարածաշրջանի առանց այդ էլ բարդ իրավիճակի սրմանը: Երկրի առաջնորդները համոզված են, որ իրենց հակառակորդները եւս շահագրգռված չեն ստեղծված իրադրության վատթարացմամբ: Սակայն մանեւրների սկզբից մեկ օր անց հրեական պետության ենթակառուցվածքների նախարար Բենիամին Բեն-Էլիեզերը, որն իր ժամանակին ղեկավարել է արտաքին գործերի նախարարությունը, լրագրողների առջեւ ելույթ ունենալիս, բավականին կտրուկ ձեւով Թեհրանին հերթական անգամ զգուշացրեց. «Իրանի գրոհին Իսրայելի կողմից կհետեւի կոշտ հակադարձում, ինչը կարող է հանգեցնել ողջ իրանական ազգի ոչնչացմանը»:

* * *

Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի շուրթերից մի անգամ չեն հնչել խոսքեր, թե Իսրայելը «պետք է ջնջվի աշխարհի քարտեզից»: Թեհրանն անմիջապես արձագանքեց Թել Ավիվի դեմարշին եւ ՄԱԿ Անվտանգության խորհրդին կոչ արեց հանդես գալ իսլամական հանրապետության հասցեին հնչող սպառնալիքների դատապարտմամբ: Իրանը ՄԱԿ-ից սպասում է վճռական քայլեր՝ պնդելով, որպեսզի Անվտանգության խորհուրդը Իսրայելից պահանջի անմիջապես դադարեցնել Իրանի դեմ հրեական պետության հնարավոր հարձակման վերաբերյալ ցանկացած հայտարարություն: Մահամեդ Խազին՝ ՄԱԿ-ում Իրանի դեսպանը, Անվտանգության խորհուրդ համապատասխան նամակ ուղարկեց:

Ոչ պակաս անհանգստություն են դրսեւորում նաեւ Իսրայելի որոշ հարեւաններ: Այսպես, Լիբանանի վարչապետ Ֆուադ աս-Սինյորան, դիմելով այս երկրի սահմանները վերահսկող ՄԱԿ խաղաղապահների ղեկավարությանը, կոչ արեց՝ «լինել զգաստ» եւ թույլ չտալ, որ Իսրայելը քաղաքացիական պաշտպանության լայնածավալ զորավարժություններն օգտագործի «իր ռազմական գործողությունների անցկացման համար»:

«Հիզբալլահ» խմբավորման առաջնորդները Իսրայելի զորավարժությունների առիթով նույնպես բացասաբար արտահայտվեցին: Նրանք միաժամանակ իրենց կազմավորումները բերեցին բարձր մարտական պատրաստության: Զորավարժությունների անցկացման նախօրեին Լոնդոնում արաբերեն լույս տեսնող «էլ-Քուդս ալ-Արաբի» թերթը բացեիբաց հայտարարեց, թե Դամասկոսը պատրաստվում է պատերազմի Թել Ավիվի դեմ եւ փորձում է կանխավ ապահովել «Հիզբալլահի» աջակցությունը:

Ի դեպ, «Հիզբալլահի» ղեկավարները համոզված են, որ իրականում Իսրայելն ինքն է Իրանի հետ ապագա զինված հակամարտության մասշտաբային պատրաստություն տեսնում: Հենց այդ պատճառով է Թել Ավիվը ձեռնարկում բոլոր միջոցները, որպեսզի մեղմի հատուցման հետեւանքները: Օրինակ, «Հիզբալլահի» գլխավոր քարտուղարի տեղակալ շեյխ Նայիմ Ղասըմը համարում է, որ հրեական պետության կառավարությունը փորձում է բարձրացնել բանակի ու բնակչության ոգին, ինչը 2006թ. լիբանանյան պատերազմից հետո զգալիորեն ընկել էր:

Էհուդ Բարաքը քայլեր ձեռնարկեց, որպեսզի ինչ-որ կերպ նվազեցնի լարվածության աճն իսրայելա-սիրիական սահմաններին: Նա հայտարարեց, թե Իսրայելը «շահագրգռված չէ հյուսիսային ճակատի զգայուն իրավիճակի վատթարացմամբ, եւ մյուս կողմը դա գիտի»:

Մինչդեռ, ելույթ ունենալով Սպիտակ տանը, նախագահ Բուշը հայտարարեց, որ Իրանը եւ «Ալ-կաիդան» Ամերիկայի համար «երկու ահռելի վտանգ են հանդիսանում»: Նա նկատեց, որ Թեհրանը կա՛մ «կկարողանա խաղաղությամբ ապրել իր հարեւանների հետ», կա՛մ կշարունակի զինել ու ֆինանսավորել ռազմական խմբավորումները, որոնք ահաբեկում են իրաքյան ժողովրդին: «Եթե Իրանը կատարի սխալ ընտրություն, մենք կգործենք այնպես, որպեսզի պաշտպանենք մեր շահերը, մեր զորքը եւ իրաքցի մեր գործընկերներին»,- նշեց Բուշը: Քիչ ուշ նա ABC գործակալության լրագրողներին ասաց, որ եթե Թեհրանը շարունակի օգնել Իրաքի զինյալներին, ԱՄՆ-ը «նրա հարցերը կպարզի»: Այնպես որ՝ Իրանի հետ պատերազմը շարունակում է մնալ Վաշինգտոնի օրակարգում:

Վերջում չի կարելի չնշել հետեւյալ փաստը: Անգամ Իրանի հարեւանները, որոնք բաժանում են նրա առաջնորդների կրոնական տրամադրությունները եւ որոշ հույզերը, գտնում են, որ Թեհրանը տարածաշրջանի համար վտանգ է ներկայացնում: Նրանք ամենեւին էլ հիացած չեն Մեծ Մերձավոր Արեւելքում լիակատար գերիշխանության հասնելու այաթոլաների մտադրությամբ: Այդ պատճառով՝ արաբական երկրների զգալի մասը Թեհրանի ու Վաշինգտոնի դիմակայությունում թեեւ լռելյայն, վերապահումներով, բայց, այնուամենայնիվ, թեքվում է վերջինիս կողմը:

nvo.ng.ru

POST-KOSOVO. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԲԱԼԿԱՆՆԵՐ

Գեորգի Էնգելգարդտ

Պատմականորեն Բալկանների ողբերգությունը եղել է այնտեղ բնակվող ժողովուրդների «մեծ գաղափարների» միջեւ հակամարտությունը: Ալբաններն ու հույները, բուլղարներն ու սերբերը, խորվաթներն ու ռումինները՝ բոլորն ունեցել են իդեալ առ այն, թե հատկապես ինչպիսին պետք է լինեն իրենց պետության սահմանները: Թերակղզին չափազանց փոքր է, ուստի եւ շատ մեծ են ազգային նկրտումների հատման գոտիները: Այն ստեղծել եւ ստեղծում է հող կոնֆլիկտների համար, նաեւ մշտական լարվածություն տարածաշրջանային հարաբերություններում՝ դարձնելով տարածաշրջանը խիստ հրապուրիչ արտաքին միջամտության համար:

«Մեծ Ալբանիա»: Ալբանական իռեդենտիստներն ու ազգայնականները, առաջին հերթին՝ կոսովյան, Բալկաններում «Մեծ Ալբանիա» ստեղծելու իրենց նկրտումներով վիճարկում են տարածաշրջանի չորս երկրների՝ Չեռնոգորիայի, Սերբիայի, Մակեդոնիայի եւ Հունաստանի տարածքները:

Վերջին 20 տարում իրենց ազգային ծրագրերի իրականացման գործում նրանք հասել են էական հաջողությունների՝ վերահսկողություն սահմանելով Կոսովոյի ու Մետոխիայի ինքնավար երկրամասի վրա, ստանալով ինքնավարության բարձր աստիճան Մակեդոնիայում եւ ամրապնդելով քաղաքական ազդեցությունը Պրեշեւյան հովտում՝ Սերբիայի հարավում: Բոլոր այս հաջողություններն ալբանների կողմից ձեռք են բերվել նախեւառաջ ԱՄՆ-ի ու ԵՄ-ի հետ ռազմավարական համագործակցության հաստատման շնորհիվ: Ալբանների քաղաքական հավակնությունների ծավալումը մնում է, առնվազն, խիստ հավանական՝ անկախ նրանից, թե ինչ կձեռնարկեն ԱՄՆ-ն ու ԵՄ-ը:

Ալբաններն այսօր զարգացող տարածաշրջանային գործոն են: 21-րդ դարի սկզբին Բալկանների ժողովուրդներից միայն ալբաններին է հաջողվում հետեւողականորեն կառուցել իրենց «մեծ պետությունը», եւ հիմքեր չկան սպասելու՝ մոտ ապագայում նրանց տարածաշրջանային էքսպանսիայի դադարեցման:

Սերբական մարտահրավեր: Սերբերը բաժանված են չորս պետության ու մեկ կիսապետական տարածքի սահմաններով: Բուն Սերբիայից բացի, դա Խորվաթիան է, Բոսնիա-Հերցեգովինան, Չեռնոգորիան եւ Կոսովոն: Վերջին 15 տարիներին նրանք ապրեցին պատմական

պարտությունների ու նվաստացումների շարք՝ հավանաբար, ամենածանրը վերջին հարյուրամյակներին (առնվազն՝ վերջին 200 տարում): Անհետացան այդ ժողովրդի պատմական բնակության ամբողջ շրջաններ, առաջին հերթին՝ Խորվաթիայում եւ Կոսովոյում, բոլոր տարածաշրջանային վեճերը հետեւողականորեն Արեւմուտքի կողմից վճռվեցին առանց սերբերի շահերի հաշվի առնման ու նրանց հաշվին:

Ուշագրավ է, որ տարածաշրջանի նորաստեղծ պետություններից սերբերի անջատման ձգտման դեպքերում նրանց գործողությունները խափանվում էին այդ պետությունների (Խորվաթիա, Բոսնիա-Հերցեգովինա) տարածքային ամբողջականության կարգախոսով, ինչը չէր խանգարում ԱՄՆ-ին եւ նրա դաշնակիցներին սատարել Կոսովոյի անջատմանը Սերբիայից՝ հիմնավորված ազգերի ինքնորոշման իրավունքով: Այս անարդարությունից սերբերի դժգոհության անխուսափելի հետեւանքն են հոգեբանական ֆրուստրացիան ու ռեւանշիզմը:

Մոտակա 20-30 տարիներին (այսինքն՝ մինչեւ 2030-2040թթ.) արտաքին թելադրանքով պարտադրված սահմանների վերանայման ձգտումը մնալու է սերբական քաղաքական կյանքի կարեւոր գործոնը:

Դա չի նշանակում, թե Բելգրադն անհապաղ կպատերազմի Խորվաթիայի, Կոսովոյի, Բոսնիա-Հերցեգովինայի դեմ, բայց այն, որ սերբական քաղաքական ասպարեզում միշտ կլինեն ուժեր, որոնք այսպես թե այնպես այդ հնարավորությունը կքննարկեն, կարելի է համարել արդի սերբական քաղաքական կյանքի աքսիոման:

* * *

Դիտարկենք Արեւմտյան Բալկանները տարածաշրջանի հյուսիսից հարավ՝ հաջորդաբար:

Սլովենիա: Այն գործնականում միատարր պետություն է՝ առանց համատեղ ապրող ազգային փոքրամասնության, որը ձգտի սահմանների վերանայման: Միակ միջպետական վեճը, որ նա ունի՝ Խորվաթիայի հետ Պիրանյան ծոցում ջրային սահմանափակման շուրջ է: Այն ձգվում է 15 տարի, կարող է շարունակվել դեռ շատ երկար եւ ավելի շուտ կարող է դասվել տեղական էկզոտիկային:

Խորվաթիա: 1991-1995թթ. պատերազմից ու սերբ բնակչության զտումներից հետո պետությունը գործնականորեն դարձավ միատարր: Բնակչության վերջին մարդահամարի տվյալներով, խոշորագույն էթնիկ փոքրամասնության՝ սերբերի քանակը 12 տոկոսից նվազել է մինչեւ 4,5 տոկոս:

Ավելին՝ եթե առաջ սերբերը Խորվաթիայում ունեին համատեղ բնակության շրջաններ, որոնք հայտնի են Կրաինա ընդհանուր անվամբ,

ապա ներկայումս հենց այդ վայրերն են ենթարկվել համընդհանուր էթնիկ զտման: Խորվաթիայում մնացած սերբ բնակչությունը քաղաքաբնակ է, որը ցրված է ողջ տարածքով. նրանք գործնականում չունեն համատեղ բնակության միավորումներ: Միակ բացառությունը Արեւելյան Սլավոնիան է (Վուկովարի տարածաշրջան), որը 1996թ. վերջին առանց կռվի փոխանցվեց Զագրեբի վերահսկողության տակ, ուստի եւ տեղական սերբական համայնքն այնտեղ կարողացավ պահպանվել: Սակայն այս տարածաշրջանը երկրի ծայրամաս է եւ չի կարող Զագրեբի կամ Դալմացիայի սերբերի համար ձգողության կենտրոնի դերին հավակնել:

Խորհրդարանում սերբերը ներկայացված են ազգային կուսակցությամբ, բայց այն քաղաքական ազդեցություն չունի եւ ավելի շուտ ծառայում է որպես Զագրեբի ազգային հանդուրժողականության ցուցափեղկ: Սերբական բնակության ավանդական շրջանները մինչեւ այժմ զգալի չափով դատարկ են. ընդ որում, Կրաինայից փախստականները սեփականության իրավունքից հրաժարման փոխարեն նախընտրում են դրամական փոխհատուցումները, որոնց միջոցները տրամադրում է ԵՄ-ը: Տեսանելի ապագայում սերբական ռեւանշի ենթադրական փորձը մնում է խիստ անհավանական՝ նախեւառաջ, Բելգրադի ռազմական ներուժի որակական դեգրադացման շնորհիվ:

Ներկա պահին առավել նկատելի խնդիր է մնում մյուս փոքրամասնությունը՝ իստրիացիները (Դալմացիայի՝ առաջին հերթին, Իստրիա թերակղզու իտալացիները եւ իտալականացված բնակչությունը): Նրանց թվաքանակը շուրջ 200 հազար է, նրանք համատեղ են տարաբնակեցված եւ պոտենցիալ կերպով կարող են ապավինել հարեւան Իտալիայի աջակցությանը:

Խոսքն այստեղ տարածաշրջանային ինքնության մասին է, իսկ 1994 թվականից Իտալիայի, Սլովենիայի ու Խորվաթիայի հարեւան մարզերը համագործակցում են «Իստրիա» եվրատարածաշրջանի շրջանակներում: 1990-ականների ընթացքում տեղական իշխանությունը գտնվում էր «Իստրիական դեմոկրատական համաժողով» տարածաշրջանային կուսակցության ձեռքում, որի պահանջները հիմնականում հանգում էին տարածաշրջանային մեծ ինքնավարության եւ մշակութային խնդիրների:

Բոսնիա-Հերցեգովինա: Այս երկիրը, լինելով արհեստական պետական կազմավորում, որակապես տարբերվում է իր հարեւաններից. այն գոյատեւում է բացառապես մշտական արտաքին կառավարման եւ ՆԱՏՕ-ի ու ԵՄ-ի կողմից վերահսկվող խաղաղապահ զորակազմի շնորհիվ:

Ձեւականորեն խոսքը համադաշնության մասին է, որն արտաքին կառավարիչները հետեւողականորեն վերածում են դաշնության՝ համադաշնության սուբյեկտների լիազորությունները զուգահեռաբար փոխանցելով

կենտրոնական կառավարությանը: Չնայած 13-ամյա ջանքերին, Բոսնիա-Հերցեգովինան նախկինի պես մնում է որպես երկու մասերի՝ Սերբական Հանրապետության եւ Բոսնիա-Հերցեգովինայի Դաշնության (ռուսական առօրյա գործածությունում՝ մուսուլմանա-խորվաթական դաշնություն) արհեստական միավորում:

Բոսնիա-Հերցեգովինայի սերբերը մշտապես խոչընդոտում են երկրում իշխանության կենտրոնացման գործընթացին ու լիազորությունների փոխանցմանը կենտրոնական կառավարությանը: Եվ չնայած քաղաքական վերնախավի փոփոխությանը, որն անցկացվեց Արեւմուտքի ճնշման տակ, այն շարունակվում է: Այսպես. արեւմտամետ Անկախ սոցիալ-դեմոկրատների միությունը, որը փոխարինեց Սերբական դեմոկրատական կուսակցությանը, այժմ նույնքան անշեղորեն պայքարում է Բոսնիայի սերբերի պետականության պահպանման համար: Դրա պատճառներն են ինչպես բոսնիական համայնքների հարաբերություններում պահպանվող լարվածությունն ու կոնֆլիկտայնությունը, այնպես էլ վերջին 15 տարիներին տեղական սերբական վերնախավի մոտ ձեւավորված՝ սեփական պետության գոյության հանդեպ սովորությունը եւ այն պահպանելու շահագրգռվածությունը: Սերբական պետության բնակչությունը շուրջ 1,5 մլն է (Բոսնիա-Հերցեգովինայի 4 միլիոնանոց ազգաբնակչության 1/3-ից ավելին), տարածքը՝ ընդհանուր պետության 49 տոկոսը:

Այս դեպքում ինչպիսի՞ն են մեծ Բոսնիայից Սերբական Հանրապետության անջատման հնարավորությունները: Ներկա պահին դրանք մեծ չեն, որովհետեւ անջատմանը եռանդագին հակազդում են ԵՄ-ն ու ՆԱՏՕ-ն: Կոսովոյի անկախության հռչակման նախապատրաստման պահին շատ էին բանավեճերը, թե կհետեւեն, արդյոք, Բոսնիայի սերբերը Պրիշտինայի օրինակին: Այդ հնարավորությունը հարուցեց ԵՄ ու ԱՄՆ որոշ անհանգստությունը: Վերջիններիս ուժեղ ճնշման տակ Բոսնիայի սերբերի անդրադարձը հասցվեց չափազանց համեստ ձեւաչափի: Նրանք խանգարեցին Բոսնիային ճանաչել Կոսովոյի անկախությունը, բայց չհանդգնեցին հռչակել բուն Սերբական Հանրապետության անջատումը:

Սերբական Հանրապետությունից բացի, անջատողականության համար շատ լուրջ ներուժ է առկա նաեւ մուսուլմանա-խորվաթական դաշնության ներսում: Այն ունի բարդ կառուցվածք. 10 կանտոն՝ մուսուլմանական, խորվաթական եւ խառը: Յուրաքանչյուր կանտոնում եւ դաշնային մակարդակում պաշտոնների միջհամայնքային բաժանման շատ բարդ համակարգ է: Այստեղ հիմնական դժգոհությունը բխում է խորվաթներից, որոնք 1990-ական թվականներին ստիպված եղան հրաժարվել սեփական պետական կառուցվածքից (Հերցեգ-Բոսնա): Կոսովոյի անկախության հռչակումը կյանքի կոչեց հանուն «3-րդ տարածաշրջանի»

ստեղծման շարժումը, որը հավաքեց շուրջ 100 հազար ստորագրություն:

Թեեւ խորվաթական համայնքը, համենայնդեպս՝ նրա մի մասը, ունի արտահայտված անջատողական մտայնություն, սակայն քաղաքական մեծ հավակնությունների դրսեւորումը նրա համար հնարավոր է միայն մետրոպոլիայի՝ Խորվաթիայի օգնությամբ, որի իշխանությունները տվյալ պահին շահագրգիռ չեն տարածաշրջանային ճգնաժամերի նոր խորացմամբ ու ԵՄ-ի հետ իրենց հարաբերությունների լարմամբ: ԵՄ դիրքորոշումը պարզ է եւ հասկանալի՝ Բրյուսելը հանդես է գալիս Բոսնիայի հետագա մասնատման դեմ. համապատասխանաբար՝ խորվաթական այս նախաձեռնությունն առայժմ մնում է կախված սպառնալիք:

Բոսնիան մնում է որպես ծայրաստիճան անկայուն կազմավորում, որը դատապարտված է փլուզման՝ տարածաշրջանում արտաքին ռազմաքաղաքական ներկայության որեւէ թուլացման դեպքում:

Չեռնոգորիա: Բալկանյան նոր պետություններից ամենափոքրը (բնակչությունը՝ շուրջ 650 հազար) կանգնած է իր կայունությանը սպառնացող ամբողջ շարք վտանգների առջեւ. հարավային մասի ալբան բնակչությունը (4,5 տոկոս) եւ արեւելքի մուսուլման-սանջակլիները (15 տոկոս): Այս ամենը խորացվում է բուն չեռնոգորցիների բաժանմամբ, որոնց մոտ կեսը ձգտում է հարեւան Սերբիա եւ իրեն համարում է սերբ: Պատահական չէ, որ 2006թ. մայիսի անկախության հանրաքվեի ելքը վճռվեց ալբանական ու սանջակյան փոքրամասնության դիրքորոշմամբ: Հարկավոր է հաշվի առնել, որ Չեռնոգորիայից գաղթածների թիվը Սերբիայում, տարբեր գնահատումներով, հասնում է նվազագույնը միլիոնի: Այս ամենը նոր պետությանը տարածաշրջանում ցանկացած էթնոքաղաքական սրացման նկատմամբ դարձնում է չափազանց խոցելի:

Սերբիա: Կոսովոյի ու Մետոխիայի բռնի անջատումից բացի, որը կատարվեց ինչպես 1999թ. ԱՄՆ եւ ՆԱՏՕ նրա դաշնակիցների ռազմական ագրեսիայի, այնպես էլ Արեւմուտքի քաղաքական ճնշման արդյունքում, Սերբիան կանգնած է մի շարք պոտենցիալ էթնոտարածքային սպառնալիքների առջեւ՝ միաժամանակ հանդիսանալով ինչպես իռեդենտիզմի սուբյեկտ (Սերբական Հանրապետության եւ Չեռնոգորիայի հետ վերամիավորման, Կոսովոյի նկատմամբ ինքնիշխանության վերականգնման ձգտում), այնպես էլ անջատողականության օբյեկտ:

Վոյեվոդինա: Երկրի հյուսիսի այս ինքնավար մարզում բնակվում է զգալի հունգար փոքրամասնություն՝ 290 հազար, որը պատմականորեն ձգտում է հարեւան Հունգարիա: Մինչեւ այժմ սերբերի ու հունգարների հարաբերությունները ծանրացած չեն հակամարտություններով (անհամեմատելի են սերբ-ալբանականի հետ): Այդ լարվածությունը կրում է պոտենցիալ բնույթ, քանզի ազգային փոքրամասնության առկայությունն

օբյեկտիվորեն ստեղծում է պայմաններ ԵՄ միջամտության համար, որի անդամ է հանդիսանում Բուդապեշտը: Հարկավոր է հաշվի առնել նաեւ «ինքնավարական» տրամադրությունների տարածվածությունը երկրամասի հենց սերբական համայնքի մի մասում, որը ձգտում է թուլացնել Բելգրադի ազդեցությունն իր գործերին: Վոյեվոդինան Սերբիայի առավել բերրի եւ տնտեսապես զարգացած մարզն է:

Սանջակ: Այն պատմական, այլ ոչ թե վարչական մարզ է, որն ընդգրկում է Սերբիայի ու Չեռնոգորիայի սահմանակից շրջանները, Օսմանյան կայսրության Նովոպազարյան սանջակը: Սանջակի բնակչության մեծ մասը կազմում են իսլամացած սերբերը (140 հազար կամ ողջ երկրի բնակչության 2 տոկոսը), որոնք օգտագործում են «բոշնյակներ», «սանջակլիներ» ինքնանունները: Թեեւ ներկա պահին սանջակյան որոշ առաջնորդներ բավական ինտեգրվել են բելգրադյան կառավարող վերնախավին՝ լինելով Դեմոկրատական կուսակցության գործընկերներ, սակայն չի կարելի բացառել լարվածության ծավալումը տարածաշրջանում: Առավել եւս, որ վերջին տարիներին սերբական Սանջակում աճում է վահաբականների ակտիվությունը, որոնք ձգտում են վերահսկողություն հաստատել շրջանի իսլամական կառույցների վրա: Վահաբականների պարբերական ակտիվությունը հանգեցնում է ոստիկանության հետ զինված բախումների, ինչը, հետաքրքրության առկայության դեպքում, կարող է արտաքին միջամտության համար որպես առիթ օգտագործվել: Պատմականորեն Սանջակը հանդիսանում է յուրատեսակ «գորշ գոտի», որտեղ զարգացած են կեղծված ապրանքների արտադրությունը (ջինսեր, սիգարետներ) եւ մաքսանենգությունը: Տարածաշրջանն աշխարհագրորեն ներկայացնում է առանձնահատուկ միջանցք, որը միացնում է Կոսովոյի ալբանական շրջանները Բոսնիայի հետ՝ այն դարձնելով Բալկաններում «կանաչ ուղղաձիգի»՝ Թուրքիայից մինչեւ Բոսնիա իսլամական տարածքների շղթայի հանգույց:

Հարավային Սերբիա: Այն Պրեշեւյան հովիտն է Սերբիայի ծայր հարավում: Բուն Կոսովոյի սահմաններից դուրս՝ ալբաններով բնակեցված (մոտ 50 հազար) տարածաշրջան է: 2000-2001թթ. Պրեշեւյան հովիտը դարձավ սերբ ոստիկանների եւ Կոսովոյում տեղակայված ալբան գրոհայինների բախումների գոտի՝ տարածաշրջանի վրա վերահսկողության համար: Կոնֆլիկտը դադարեցվեց ՆԱՏՕ ուժերի միջամտության շնորհիվ, որոնք պնդում էին տարածաշրջանում խառը ոստիկանության ստեղծման եւ ալբանների քաղաքական ներկայացուցչության ընդլայնման շուրջ փոխզիջման հասնելու հարցում:

Այս անջատողական մտայնությունների միաժամանակյա կենսագործման դեպքում Սերբիային սպառնում է երկրի առավել զարգացած

ու բերրի շրջանների կորուստ եւ վերադարձ 1912թ. սահմաններին:

Մակեդոնիա: Եթե մինչեւ 1999թ. մակեդոնյան պետականության գլխավոր խնդիրը Հունաստանի հետ պետության անվան շուրջ վեճն էր, ապա սահմանակից Կոսովոն ՆԱՏՕ զորքերի եւ տեղի ալբանական զինյալների խառը վերահսկողության տակ փոխանցման պահից առաջին պլան ելան ալբանական համայնքի աճող հավակնությունները:

Այսօր Մակեդոնիան փաստացիորեն մասնատված երկիր է: Ալբանները, որոնք 2004թ. մարդահամարի տվյալներով կազմում են շուրջ 2 միլիոնանոց պետության 25 տոկոսը, վերահսկում են երկրի՝ Կոսովոյին սահմանակից արեւմտյան շրջանները: Ըստ 2001թ. համաձայնագրի, ալբանական համայնքն ընդլայնված ներկայացուցչություն ստացավ նաեւ իշխանության հանրապետական մարմիններում: Վերջին տասնամյակների ընթացքում մակեդոնյան ալբանները կողմնորոշվեցին դեպի իրենց կոսովցի ազգակիցները. նրանց շատ առաջնորդներ հանդիսանում են Պրիշտինայի համալսարանի շրջանավարտներ, իսկ 2001թ. ընդհարումներին կոսովո-մակեդոնյան սահմանի երկու կողմից էլ ամենաակտիվ մասնակցությունն են ունեցել կոսովցի զինյալները:

21-րդ դարի առաջին տասնամյակի ավարտին Մակեդոնիայի սահմանների անձեռնմխելիության միակ երաշխիքը ԵՄ ու ՆԱՏՕ բարի կամքն է: Եթե Բրյուսելն անհրաժեշտ համարի ալբանների հետ իր հարաբերությունների շրջանակներում գնալ Սկոպյեի հանրապետության սահմանադրության կամ սահմանների վերանայման, մակեդոնացիները, թերեւս, ստիպված կլինեն հաշտվել դրա հետ:

Ալբանական դիրքերի հետագա ամրապնդումը Մակեդոնիայում հղի է ընդհանուր տարածաշրջանային ճգնաժամով, քանզի այդ տարածքը պատմականորեն եղել է Բուլղարիայի, Հունաստանի, Սերբիայի միջեւ կռվախնձոր, ու նրա կարգավիճակի եւ/կամ սահմանների վերանայումը, մեծ հավանականությամբ, կարող է ճգնաժամի մեջ ներքաշել նաեւ այլ սահմանակից երկրներ:

* * *

Այսպիսով, վեճերի սպեկտրը Արեւմտյան Բալկաններում լայն է, եւ մոտակա 20-30 տարիներին այստեղ սահմանների հետագա վերաձեւման համար իրական մեծ ներուժ կա:

Արեւմուտքի կողմից կոսովցի ալբաններին սեփական պետականություն պարգեւելը հանդիսանում է այդ գործընթացի կարեւորագույն խթանիչը:

apn.ru

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գագիկ Տեր-Հարությունյան

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԵՐ.
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՑԱՆՑԱԿԵՆՏՐՈՆ ՀԱՄԱԿԱՐԳ 1

Ռուբեն Մելքոնյան

ՆԵՐՔԻՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՒՅԹԸ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԾՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 6

Սարգիս Հարությունյան

ՎՐԱՍՏԱՆ. *ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՍՊԱՍԵԼԻՍ* 10

Սուրեն Մանուկյան

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆԸ.
ՀԱԿԱԳԼՈԲԱԼԻՍՏՆԵՐ ԵՎ ԱԼՏԵՐԳԼՈԲԱԼԻՍՏՆԵՐ 15

Սեւակ Սարուխանյան

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ. *ՀՈՐԴԱՆԱՆԻ ՎԵՐԱՃՈՒՄԸ*
ՏԱՐԱՃԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ 21

Արաքս Փաշայան

ՀԱԿԱԻՐԱՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐԱԲԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 24

Վլադիմիր Իվանով

ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՍՈՒՄ 29

Գեորգի Էնգելգարդտ

POST-KOSOVO. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԲԱԼԿԱՆՆԵՐ 34

Շապիկին պատկերված է տեսարան
Նեմրութի խառնարանից

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: *Հեռ. 58 04 91, 58 04 83:*
էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Ο1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: